



ՊՈՆՏՈՍԻ ՀԱՅԵՐԸ

ԱՅԻՑՎԱԴՐԱԿԱՆ ԵՒ ՔԵՂՔԱԿԱՆ ՎԻՃԱ ՏՐԵՊԻԶՈՆԻ¹⁾



ԴԻՐՔ, ԿԱՄԱՅ, ՕԴ, ԵՒ ԱՅՆ

բաղիղոնի արդի վիլայէթը՝ որ
ընդհանրապէս ծմակային, հիւսի-
սահայեաց ամուր երկիր մէ, կը
ձեանայ Սև ծովու հարաւային եղերը շըդ-
թայաձե պատող բարձր ու դժուարուտ լեռ-
ներէ, խորին և նեղ ձորերէ ու խոխոմ-
ներէ և մեծամեծ ու մթին անտառներէ։ Իր
մէջ կը պարունակէ շատ մը փոքր գետեր և
գետակներ, և երկու սահմանածայրերն ալ երկու հզօր գե-
տեր, այն է Ճորոխ և Ալիս։ Վիլայէթի ամենէն լայն տեղը
երեք օրուայ ճանապարհէն աւելի չէ։ Խոկ երկարութիւնը

¹⁾ Այս տեղադրութիւնը պատրաստուած է 1870 թուին, այս
պատճառով ներկայիս համապատասխանել չէ կարող և հարկէ ամ-
բողջովին։

բսանէն աւելի, որ արեկելեան կողմէն Ռուսի սահմանագլխէն կըսկսի և ծովեղերքով մինչև Սենոսի մօտերը՝ Ալիս գետ կը հասնի. և շատ մը դայմագամութեանց և միւտիւրութեանց կը բաժնուի. Ցրապիզն քաղաքը այս վալիութեան կեղրոնը՝ դէպ ի արեկելեան կողմը ծովեղերքը կը գտնուի. Կլիմայն մէկ երկու գաւառներէ զտտ, լինչպէս են Արդուին և Կիւմիշխանէ, ընդհանրապէս խոնաւ է՝ մեծամեծ անտառներու և ծովու պատճառաւ. և ծովեղերքները բարեխառն, ուր քիչ անդամ ձմեռը հաղիւ քանի մը օր ձիւն կընստի. Օդը ամառ ատեն բարձրերը, լեռնային մասը շատ անդամ մառախլապատ և թօնուտ է. բայց տոռողջ և անվնաս. իսկ ծովեղերքը՝ բաց ու ջինջ, սակայն ընդհանրապէս վատառողջ և վնասակար է,

ՀՈՂ, ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ, ՀԱՆՔ ԵՒ ԲԵՐՔ

Բոլոր վիլայէթի հողը՝ չեմ կընար գիտնալթէ քանի մասին մէկը մշակուած է, և որչափ ալ մշակելի կը գըտնուի, վասն զի ասիկա բաւական դժուարութիւններ ունի և ճիշդ հաշիներու կրկարօտի, սակայն սա յայտնի է որ բոլոր երկիրը տեսակ տեսակ հաներու. և բուսաբերութեանց մասին ընդհանրապէս հարուստ է. այսուամենայնիւ թէ հանքերը և թէ երկրին մշակութիւնը երեսի վրայ ձգուած ըլլալուն՝ երկիրը անկերպարան, բերքը կարելի եղածէն խիստ նուազ՝ թէ տեսակաւ և թէ քանակութեամբ. Բոլոր ժողովուրդն ալ ընդհանրապէս յետին աղրատութեան և կարօտութեան մէջ կը գտնուի այսօր՝ թէ բարոյապէս և թէ նիւթապէս:

Թէպէտ ընդհանրապէս խօսելով բոլոր վիլայէթի ժողովուրդը այս վիճակին մէջ է. սակայն վիլայէթի զըլխաւոր քաղաքին կից դտնուող գաւառները որ պէտք էր միւններէն աղէկ վիճակ ունենային՝ կերպով մը անոնցմէ

աւելի թշուառ են: Այս գաւառներն են, Աղճապատ, Մաշկա
կա և Երմուրա կամ Գովաթա, որոնց մէջ բաւական հա-
յեր ալ կը դտնուին թշուառ վիճակի մէջ: Ուստի խօս-
քերինս մասնաւորելով նախ այս երեք գաւառաց մաս-
նաւոր դիրքին, երկրին որպիսութեանը, պտղաբերութեա-
նը, ժողովրդեան կեանքին ու ապլուստին վրայ խօսինք
ընդհանրապէս, և ապա մեր ազգայնոց ազգային, կրօ-
նական և ուսումնական վիճակին վրայ:

Յիշեալ երեք գաւառաց ծովեղերքը միացած տեղը
կը դտնուի Տրապիզոն քաղաքը. քաղաքին արևմուտքը
Աղճապատ գաւառն է, որուն զլխաւոր տեղն է քաղաքէն
երեք ժամ հեռու Փլադանա կոչուած ծովեղերեայ գիւղա-
քաղաքը. Տրապիզոնի հարաւային կողմն է Մաշկա. և իր
զլխաւոր տեղն է ձէվիզլիք աւանը, որ վեց ժամ հեռու
է քաղաքէն. իսկ արևելքը՝ Երմուրա, որու զլխաւոր տեղն
է Գովաթա ծովեղերեայ աւանը, երկու և կէս ժամ հեռու
քաղաքէն: Ասոնց երեքն ալ ծմակային, լեռնային, ա-
պառաժուտ, դժուարուտ, խորածոր, քաղմածոր, անտա-
ռային և ամուր գաւառներ են. հարաւային կողմէն Պոն-
տական բարձր լեռներով և հիւսիսային կողմէն Սև ծո-
վով պարսպուած: Այս երեք գաւառները միշտ միացեալ
կերպով սլիտի առնենք այս զրութեան մէջ: Այս երեք
կից գաւառներու ամենէն լայն մասը տասը ժամէն աւե-
լի չէ: իսկ երկարութիւնը ծովեղերքով տասնըհինգ ժա-
մի չափ է:

Գաւառիս մէջէն ծովը թափող գետերը հետեւալներն
են. որոնք բոլորն ալ Պոնտական լեռներէն սկսելով՝ ա-
ւելի մեծ չեն. Աղճապատի գետերը Փլատանայի և Տրա-
պիզոնի մէջ տեղը ծովը կը թափին, որ է Կալանիմա և
Սէրա. Մաշկայի գետը Տրապիզոնի մօտ արևելեան կող-
մը ծովը կը թափի, որ է Տէղէրմէն տէրէսի և միւսերէն
մեծ է. Տրապիզոնի երեք ժամի մօտ արևելքը՝ ծովը կը

Ժափի Գովաթա կամ Ճանա տէրէսի. անոր ալ կէս ժամ արենքը՝ Տըռսնա գետը, Գովաթա գաւառի արենելան ծայրը՝ Տրապիզոնի 7 ժամ հետաւորութեամբ ծովը կը թափի եամաօլի մեծկակ գետը. Եամաօլի գետի ծովը թափած տեղէն Միւրմէնէ ծովսղբեայ աւանը մէկ ժամ է:

Դաւառիս կլիմայն խոնաւ է և ծովեղերը բարեխառն. Հարաւային՝ լեռնային մասին օդը ամառը զբիթէ միշտ միգապատ և անձրեսու է. սակայն ցուրտ ու առողջ, խոկ ծովեղերինը՝ ընդհանրապէս պարզ և ջինջ, սակայն տաղնապեցուցիչ տար ու վնասակար. Լեռնային ու ծովեղերեայ մասերուն մէջ տեղը դանուած գիւղերու օդը խիստ աղնիւ, զով ու առողջարար է. ասոր համար քաղաքացիք ամառը այս գիւղերը կերթան, և ընտանեօք քանի մը ամիս կը կենան. մանաւանդ քաղաքը փոխադրական ախտ պատճած ատենները. Գաւառիս տիրոպ վնասակար հովը՝ հիւսիսային արևմտեանն է, որ թէ ծովը դանուող նաւերու և թէ դարնան ատենները երբեմն գաւառիս մշակութեան ալ մեծամեծ վնասներ կը պատճառէ. նոր բոյսերն ու պտղատու ծառոց ծաղիկները և երբեմն ծիլերն խոկ ուռուցանելով.

Այս դաւառաց երկիրը, ինչպէս ըսինք, լեռնային և ապառաժուտ ու անտառային մասերէ կը բաղկանայ. տեսակ տեսակ հանքերու, երկաթի, պղնձի և արծաթի նըշաններ ալ պակաս չեն երկրին այլ և այլ կողմերը, սակայն պղնձինը՝ ամենէն աւելի է. քանի մը տարի առաջ Գովաթայի Ուզ գիւղին մէջ պղնձի հանք մը դեռ կը բանէր. սակայն հիմա բոլորն ալ երեսէ ձգուած ու մոռցուած են. և երկիրն ալ այս հարստութենէն զրկուած է խսպառ:

Թէպէտ այս երեք գաւառաց հովը վալիութեան ուրիշ շատ գաւառներու հողէն սակաւ ինչ նուազ բուսաբեր է, շատ գործածուած և տկարացած ըլլալուն պատ-

ճառաւ, սակայն եթէ պարտուղատշան կերպով խնամք տարուի, նորէն մեծ հարստութիւն կրնայ ձեռք բերուիլ, տեղին նեղութիւնն ու հողին ծերութիւնը արհեստն ու զօրութիւնը կրնան լցնել, եթէ դիտութիւն, դրամագլուխ և աշխատութիւն ըլլայ. և եթէ կառավարութիւնն ալ քիչ մը աւելի խնամք տանի երկրագործութեան:

Բոլոր երկրին մակերեսոյթը ի բաց առեալ ժայռուտ մասերը՝ մշակութեան նկատմամբ չորս զլիսաւոր մասերու կրնայ բաժնութիլ, որոնք ժողովրդեան ապրուստի զլիսաւոր միջոցները կամ աղբիւրները կը համարուին, որը են՝ անտառ, արօտ, ծառաստան և անդաստան, որոնց վրայ քիչ մը երկար խօսենք և տեսնանք թէ ժողովուրդը ասոնք խնչպէս կը դործածէ ու կը խնամէ:

Ա Ն Տ Ա Ռ

Ընմիջապէս Սկ ծովու հարաւային եղերքէն սկսելով աստիճանաբար բարձրացող Պոնտական անարկու լերանց բազուկները՝ նաղտեաց սահմանագլուխները իրար աղխաղսելով, Տրապիզոնի և Կարնոյ արդի վալիութեանց մէջ տեղի հզօր և երկայնաձիգ գոտիները կը ձեացնեն. Այս գոտիներու հիւսիսային, ծովահայեաց երեսը ընդհանրապէս անտառային է. սակայն այս անտառները օրըստօրէ խիստ զգալի կերպով նոււղելու վրայ են՝ առանց մէկու մը հոգը ըլլալու. Յայտնի նշաններով կը տեսնենք և ծերերէն ալ կլսննը որ Պոնտական լերանց ամենէն բարձր կատարներն իսկ, որ Գաղըրլը կը կոչուին, հսկայ ծառերու խիտ անտառներով ծածկուած են եղեր առաջ, որոնց միայն արմատները տեղտեղ կ'երևան հիմա. Այս անտառներուն մէկ մասը ժամանակաւ բանուած տեսակ տեսակ հանքերու պատճառաւ սպառեր է. իսկ մեծագոյն մասը շատ տարիներ առաջ աշնանային ժամանակ մեծ

լսանձ մը իյնալով՝ քանի մը շաբաթ կ'ուտէ կը լափէ և
շատ մը մեծամեծ անտառներ մոխիր կը դարձնէ, որ
ապա կամ տեղւոյն ցրտութեանը պատճառաւ անտառ
չհասնելուն և կամ մատաղ տունկերը կենդանիներէն ստէպ
ճարակուելուն՝ հիմա յիշեալ լերանց կատարները բոլորովին
լերկ մնացած է: Լերանց ծովահայեաց երեսի անտառներն ալ
երեսուն տարի առաջ շատ խիտ և տարածուած էին. և ան-
միջապէս ծովեղերրէն սկսելով մինչև լերանց կատարնե-
րուն կը մօտենային: Բայց սակայն հիմա այն անտառնե-
րը ծովեղերրէն քանի մը ժամ վեր բարձրանալէն զաա-
հսկայ անտառներ ու լաւ տիսակ ծառերն ալ խիստ
պակսած են, մանաւանդ ծրապիզոնի շուրջը: Վասն զի
այս տեղերը անտառը շինականին գրեթէ արտը կամ մա-
ռանը եղած է, գիշեր ու ցերեկ փայտ, ատաղձ և ածուխ
կընէ, կը ջարդէ. և ի՞նչ անխնայ, մայուսի մը համար
շատ անգամ հսկայ ծառ մը կտրել և ձգել երթալով. և
ինչու համար, վասն զի անտառները երկու կարգ կը
բաժնուին, մէկը տներու շուրջը՝ մասնաւորաց սեպհակա-
նութիւնը, որ խիստ թիշ է. իսկ միւսը զիւղերու սահ-
մանին մօտ, լեռնային մեծ անտառները, որ ամբողջ զիւ-
ղերու սեպհականութիւնը համարուած է հին հեօնէթնե-
րով, և շինականին իր առանձին սեպհականութիւնը չէ,
որ խնայէ. ասկէ զատ՝ լերանց կատարներուն մօտի ան-
տառներն ալ ընդհանրապէս տէրութեանն է. անոնց ալ
գրեթէ տէր ու պաշտպան չկայ: Եթէ անտառ չգտնուած
երկիրներու փայտի նեղութեանը և անտառաց եղած խնա-
յութեանը տեղեակ ըլլային մեր շինականները, ան ատեն
կարելի էր որ իրենք ալ այս անտառներուն քիշ մը խնա-
յէին. կամ թէ իրենց տներուն մօտ նոր և օգտակար
անտառներ հասցնելու հոգ տանէին: Ուրիշ հեռաւոր եր-
կիրներ անտառ հասցնելու համար՝ նաւերով մայր փայ-
տի սերմ կը տանին ասկէ. սակայն մեր շինականը չը

զիտեր և չուզեր համոզուիլ թէ կարելի բան է ցանելով
անտառ կամ թթենաստան հասցնել և օգուտ քաղել. և
թէ անտառի տերեները ժողվել և արտի վրայ տարածե-
լով արտը զօրացնել. Ուստի անտառաց այսպէս անխնա-
մութիւնը քիչ տարիէն զիւղացին անհաց և քաղաքացին
անփայտ թողով կըսպառնայ. Սակայն այս անխիղճ դա-
հիճները այսչափով ալ գոհ շըլլալով ոմանք ծովեղերեայ
օդին վնասակարութենէն փախչելով և ոմանք ալ իրենց
կենդանեաց արօտ գտնալու պատճառաւ՝ ամրան ամիս-
ները յիշեալ լիրանց կատարները (եայլա) ելած ատեննին
հոն ալ երեր ամիս իրենց սովորական անդթութիւնը ի
գործ դնելով այն կողմէն ալ քիչ տարուան մէջ քանի
մը ժամ տեղ դէպ ի վար իջուցին անտառները, և եթէ
այս վնասակար ընթացրը այսպէս անարգել շարունակուի-
քանի մը տարիէն փայտի պակասութիւնն ու սղութիւնը
քաղաքիս մէջ պիտի սաստկանայ, որ արդէն իոկ բաւա-
կան զզալի եղած է. և թերես ան ատեն դարմանի մը
նայուի. բայց ալ ժամտնակը անցած ըլլալով օդուտ չ'սիրտ
ընէ. Այս շինականները զիւղերու սահմանակից ջարդուած
անտառաց տեղերը խոտ կը ցանեն, քանի մը տարի
(շայեր) կամ արտ կ'ընեն, և այնուհետև բարձրի անտա-
ռաց հովը ընդհանրապէս ցուրտ և սակաւաբեր ըլլալով
կը մնայ անպիտան կորդ և լերկ. խոտ անգամ շ'բուսց-
նելով. Եթէ անտառ տնկելու սովորութիւն ըլլայ՝ ժամա-
նակ մը ետքը վաճառականութեան մեծկակ դուռ մը
կրնայ բացուիլ ժողովրդեան առջին. վասն զի պիտի
կրնան թէ ընտիր թթենաստաններ ունենալ, և թէ ըն-
տիր տօսախի, հաճարիի (կիւղէն), մաշկ մրգենիի (քէս-
թանէ), ընկուղենիի և ուրիշ շատ տեսակ ընտիր փայ-
տերու և պտղատու ծառոց անտառներ ունենալ, և շատ
ոտակ շահի անոնցմէ, քանի որ երկիրը ծովեղերեայ է:
Այս մասին Սոխումի և 2էրքէղիայի անտառաց մասին

Ռուսիոյ կառավարութեան բռնած ընթացքը մեզի խնա-
յողութեան մեծ դաս մը կրնայ համարուիլ:

Ա Ր Օ Տ

Եյս գաւառաց մէջ կենդանեաց բնական արօտ խիստ
նուազ է. և այս պատճառաւ կենդանի պահելու ալ մեծ
զժուարութիւն կայ. արուեստական մարդ խիստ քիչ կայ.
և այն բարձր տեղերը, ուր հողը ստորին է և կամ տե-
ղը ցուրտ ըլլալով ուրիշ բերք չհասցներ: Առույթի և
ուրիշ ընտիր խոտի տեսակներ ցանել սովորութիւն ե-
ղած չէ և չեն գիտեր. անտառներուն շատերն ալ ընդ-
հանրապէս շատ խիտ և խիստ փշալից, որ որթի նման
բոլոր անտառը ներսէն ու դուրսէն կը պատեն. անանկ
որ անհնարին կըլլայ կենդանի մէջը մտնել. թող թէ
շրջել ու արածել. Արօտի նեղութեան պատճառաւ ամա-
ռը երեք ամիս կենդանիները լիռները կը տանին արա-
ծելու համար, որ շատ անգամ ալ տեսակ տեսակ տա-
րափոխիկ ախտերով կը ջարդուին. և զարնանային ու
աշխտնային ամիսներն ալ իւրաքանչիւր ոք իր կենդանի.
ները իր տանը շուրջը կարածեցնէ, ուր կենդանին կի-
սափոր անգամ չկրնար ըլլալ. վասն զի գրեթէ ամեն օր
միկնոյն բոյսին արմատը կը կրծէ կենդանին՝ երկրագոր-
ծը արածեցնելու բաւական երկիր և ուտեցնելու պատրաս-
տի բան չ'ունենալուն համար. և այս կերպով կենդանին
ինչ սնունդ պիտի առնէ և ինչ օգուտ պիտի կրնայ մա-
տակարարել իր տիրոց: Զմեռն ալ քիչ մը հասարակ չոր
խոտով, և քիչ մ'ալ (լազուտի) ցօլունով և տերենովը
կենդանիք խարխրուելով՝ լիրկ կաշիով և շոր ոսկրով մի-
այն գարունը կ'ողջանեն. Եյս երկիրներ կենդանեաց պա-
րարտութիւնը՝ մանաւանդ կովերունը՝ բացառութիւն կը
համարուի. նոյնպէս ալ եղ, ձի և ոչխար պահելը. Ձի-

նականին կենդանական հարստութիւնը ընդհանրապէս 2 - 3 կով և 1 - 2 ալ հորթերէ կը բաղկանայ. սակայն քանի մը տարին անգամ մը ցաւը կուղայ և զանոնք ալ կը տանի. Կովերը արածերու համար նախորդ չեն դործածեր այս երկիրները. վասն զի իրենց տները խիստ ցրիւ են և ընդարձակ արօտավայրեր ալ չունին. Կովերուն խւղը հաղիւ թէ իրենց կը բաւականանայ՝ եթէ ուտեն. սակայն յաղրատութենէ ստիպեալ՝ միշտ մէկ մասը ծախելու կը պլարտաւորին. Ուրիշ երկիրներու նման կենդանի տածելով, կով և կամ եղներ հասցնելով և ծախելով վաստակ չեն կրնար ընել երբէք. սակայն եթէ երկիր պլարատացնել և զօրացնելու և տեսակ տեսակ օդատակար խոտեր ցանելու միջոց և զիտութիւն ունենան՝ կրնան բաւական ստակ ձեռք բերել այս կերպով ալ.

Ե Ա Ռ Ա Ս Տ Ա Ն

Ճինականը երկու տեսակ ծառերէ արդիւնք կը շահի. անտառայիններէ և պտղատուններէ. Արդէն ինչպէս ըսինք մեծամեծ անտառներէ զատ՝ տներու մօտ փոքր անտառակներ ալ կան՝ մասնաւորաց սեպհական. յորոց իրենց տանը վառելու փայտը հոգալէ զատ երբեմն կը տրելով քաղար ալ կը տանին ծախելու. բայց ասոնք օր ըստ օրէ պակսիլ և սպառելու վրայ են, և քաղաքին երկու և երեք ժամ զիւղեր ընդհանրապէս այս փոքրիկ հարստութենէն զուրկ են. Ճինականը տեսակ տեսակ պտղատու շատ մը ծառեր և որթեր ալ ունի. որոնք իր կալուածին այլ և այլ կողմերը, արտերու և անտառներու մէջ կամ շուրջը ցան ու ցիր վիճակի մէջ՝ և ոչ թէ ուրիշ երկիրներու այգեաց նման ամփոփ և կարգաւ ու կանոնով տնկուած են. Ասոնք՝ թէ անտառ, թէ պտղատու ծառ և թէ որթ բնաւ տարբերութիւն մը չ'ունին վայրի

և անպաշտպան անտառներէ, ճիշդ անոնց պէս անխնամ, և անդարման ընական վիճակի մէջ մնալով, միայն Գովածիա գաւառին մէջ կաղնուաներու (փընտըլլըք) բիչ մը խնամք կը տարսով՝ գաւառին գլխաւոր բերքն ու ժողովրդական ապրուստը մասամբ մը անկէ գոյանալով. (Կաղնուաները բիչ մը կանոնաւոր կերպով տնկուած, իրարմէ վեց կամ եօթը բայլ հեռու եօթը ութը տունկը ի միասին մէկ փոսի մէջ տնկելով, և ամեն տարի կը յօդեն և տակերնին կը մաքրեն փուշերէն): Խսկ միւս պաղատու ծառերէն խիստ քիչ օղուտ կը քաղեն, մանաւանդ քաղաքէն հեռու գտնուող գիւղերը, որոնք ոչ պտուղները, և ոչ ալ անոնցմէ արհեստաւոր բան մը կազմելով կրնան քաղաք բերել ու բանի մը դահեկան շահել. սակայն թաշերը միւսերուն հաւասար և թերևս աւելի ալ կուտան, թէ պտուլ եղած և թէ չ'եղած տարիները: Այս գաւառոց մէջ բոլոր պտղատու ծառոց համար սեպհականուած տեղը երկրին բովանդակութեան հաղիւ մէկ հարիւրորդը կ'ըլլայ, և թերևս ալ քիչ, այսինքն ^{1/120}:

ԱՆԴԱՍՑԱՆ ԿԱՄ ԱՐՏԱՎԱՅՐ

Խնչպէս որ դաշտային երկիրներ կալուածոց մեծ մասն արտերէ կը քաղկանայ, նոյնպէս չէ այս երկիրները. այլ ընդհակառակն. այստեղ արտերը կալուածոց ամենէն փոքր մասը կը կազմն. վասն զի չեմ կարծեր թէ բոլոր երկրին տարածութիւնը մէկ հարիւրորդ մասը կրնան բռնել. Ասոր պատճառը երկրին մակերեսութիւնն խիստ խորտուբորտ ըլլան ու ջրային ազդեցութիւնն է, որ զործուած երկրին մշակելի ընտիր հողը բանի մը տարուան մէջ հեղեղներէն կ'ողողուի և հետզհետէ ձորերը կ'իջնայ. և արտին մէջ տեղերը լերկ քար կամ այնպիսի կարծը հող մը կը մնայ, որ մշակելի ըլլալու համար մեծ

աշխատութին, արհեստ և դրամագլուխ կ'ուղէ. և այսպէս օրըստօրէ արտերը կը պակսին՝ նոյնպէս և ցանուած մարգերը, ու անոնց տեղերը լերկ ապառաժ կամ փշալից խոպան մնալով՝ աղքատ և տգէտ երկրագործը մտատանջութեան և հոգերու մէջ կը ձգեն. Երկրին ծովեղերեայ մասը՝ նոյնապէս և ձորերը աւելի պտղաբեր, կրային, աւազխառն և դեղին կաւերէ, թեթև ու տաք հողերէ, իսկ բարձրերը ասոնց հակառակ ցուրտ, ծանր և անբեր հողերէ կազմուած է, թէպէտ տեղ տեղ ալ անտառային պարարտութին կը գտնուի. Այս երեք գաւառաց մէջ՝ հողի ազնուութեան մասին, Աղճապատը առաջին է, նոյնապէս մշակութեան ալ. Երկրորդ է Գովաթա և և Երրորդ Մաջլա, որ աւելի լեռնային է և ծովեղերը բնաւ մաս չունի:

Բ Ե Բ Ք.

Այս երկիրը ծովեղերեայ ըլլալով՝ վաճառականութեան խիստ յարմար է, բայց երկրին բնըքը խիստ նուազ է հիմա՝ քանի որ կրնայ շատ արտադրել. Արդի բերքն է գլխաւորապէս լազուտ, լուրիս տեսակ տեսակ, թիւթիւն, կաղին, գետնախնձոր, ազնիւ իւղ, մեղրամոմ, բթան, ձիթապտուղ, ձէթ անուշ, մետաքս՝ խիստ քիչ բայց ազնիւ, կանեփ, բուրդ, լիմոն, տանձ և խնձոր և դինի նուազ՝ որթածաղիկին պատճառաւ, որ 12 տարիէն իվեր որթերը գրեթէ չորցուց. Հիմակու հիմա միայն կաղին, լուրիս, քիշ գետնախնձոր, բաւական թիւթիւն, իւղ և քթան երկրէն դուրս այլ և այլ կողմեր կը հանուին. իսկ միւսերը մէկ մասին անգամ չեն բաւեր. զոր օրինակ, լազուտ, զէյթիւն և թիւթիւն՝ որ այլ և այլ հեռաւոր երկիրներէ կը բերուին խիստ մեծ քանակութեամբ. թող քաղաքին ցորենը. Մակայն եթէ օրինաւոր կերպով հոգ տարուի

երկրագործութեան՝ (լաղուտէն) զատ՝ միւսները կարելի է մեծ քանակութեամբ երկրէն դուրս հանելէ յետոյ, խիստ մեծ քանակութեամբ ալ աղնիւ մետաքս, դինի, ձէթ աղնիւ, լիմոն նոյնպէս աղնիւ. տորոն և այլն ալ արտադրել, որով վաճառականութիւնը կըզարդանայ և գաւառն ալ տէրութեան ընտիր ու պտղաբեր դաւառներէն մէկը ըլլալով՝ թէ ժողովրդեան և թէ տէրութեան մեծամեծ օգուտներ կրնայ հասցընել:

Բայց սակայն տգիտութեան և ծուլութեան գործերը զարմանալի են. վասն զի Ազճապատի մէջ այսօր առատ և ընտիր թիւթիւն կ'ելլէ, որ մեծ քանակութեամբ ոչ միայն Թիֆլիս, Թայղան՝ այլև մինչև Լոնդոն կ'երթայ. սակայն միւս գաւառներու մէջ թիւթիւնի թուփ մը անգամ չ'տեսնուիր. նոյնպէս Գովաթա գաւառը առատ կաղին կ'արտադրէ, որ մինչև Թայղան, Եղիպատոս և ուրիշ հեռաւոր երկիրներ կըտարուի. սակայն միւս երկու գաւառներու մէջ անոր տունկը անդամ հազիւ կ'երեի. նոյնպէս պէտք է լիմանալ նաև ձէթի, միտաքսի և խաղողի և բրինձի և այլոց մասին ալ, ինչնւ այս այսպէս ըլլար, քանի որ կլիմայն մէկ, օղը մէկ, հողը և այլն ամենը միենոյն՝ ու բերքը նոյն չ'ըլլայ. Ահաւասիկ տգիտութեան չար խտրութիւններն և սահմանները, զոր կը դնէ միենոյն գաւառի, միենոյն զիւղի և միենոյն արտի մէջ ալ: Այսպէս են վիլայէթիս միւս բոլոր մասերն ալ, որոնք ընդհանրապէս յիշեալ բերքերուն ամենն ալ առատութեամբ կրնան արտադրել. բայց սակայն այսօր կամ ամենեին չեն արտադրեր և կամ խիստ նուազ ու ստորին տեսակէն: Բամպակի վրայ չեմ խօսիր՝ այս երեք գաւառաց նեղութեանը նայելով, սակայն կլիմայն կրնայ խիստ մաքուր բամպակ արտադրել, ինչպէս Մուխլիս Էմին փաշայի երկամեայ փորձէն տեսնուեցաւ. Գաւառիս լեռնային ըլլալուն համեմատ որսի կենդանիք, աղուէս և այլն առատ

շեն. և հետզետէ ամեն տեսակներն ալ սպանուելով պակտելու վրայ են:

Բ Ն Ա Կ Ի 2, Լ Ե Զ Ո Ւ :

Այս երեք գաւառաց բնակիչք՝ ինչպէս նաև բոլոր վիճայէթիս ալ, երեք ազգերէ միայն կըքաղկանան, չայ, Յոյն և Թուրք, բոլոր վիլայէթիս մէջ ընդհանուր գործածական լեզուն՝ գաւառական Ծուրքերէնն է. բայց չայք և Յոյնք բոլորն ալ իրենց ազգային լեզուն գիտեն և ամեն տեղ ալ կը գործածեն. իսկ Ծուրքերը մասնաւոր լեզուներ ալ կը գործածեն այլ և այլ գաւառներու մէջ՝ իրրե մայրենի սեպհական լեզու, զորօրինակ, Պաթումի բովանդակ գայմագամութիւնը, որ արևելեան կողմէն, Ռուսի սահմանագլխէն մինչև Ճորոխ գետ 12 ժամ ծովեղերք ունի, որուն մէջ է նաև Պաթում, երկուք ալ լեռնային մեծ գաւառներ ունի, Սնարա և Շիփանէ՛ որուն մէջ կըգտնուի Արգուխն բաղաքը, այս գաւառաց բոլոր բնակիչները իրենց ազգային լեզուն, վրացերէն կը խօսին: Լազիստանի կամ Խոսկէի գայմագամութիւնը, որ Ճորոխէն սկսեալ մինչև Քէրմէր 20 ժամ ծովեղերք ունի, և որուն դլսաւոր աւաններն են՝ Խոփէ, Արխաւա և Աթա, բոլորն էլ իրենց ազգային Մնկուելի (Եգերք) լեզուաւ կը խօսին: Աթենայէն 12 ժամ հեռի լերանց հարաւային կողմէն է ամուր գիրրով չամշէն հայախօս մեծ գաւառը, ուր հիմա հազիւ բան տուն հայ կըգտնուի բահանայով մը Էլէհովիտ գիւղի մէջ: Նոյնպէս Տրապիզոնի 12 ժամ արևելքը Գարատէրէի մէջ բանի մը հազար ընտանիք և եամպօլիի ձորոյն մէջ Գլըճլը, և այն գիւղերը. Ուզի գաւառակի մէջ ալ քանի մը գիւղ բոլորն ալ գաւառական մարուր հայերէն կը խօսեն: Տրապիզոնի արևելեան կողմը 12 ժամ հեռի Օֆ գաւառի և Տրապիզոնի արև-

մտեան կողմը Թոնսս գաւառի ընակիչք բոլորն ալ մաքուր յունարէն կը խօսեն. այնպէս որ թէ չայք և թէ Յոյնք իրենց բրիստոնեայ ազգայիններէն աղէկու զուտ պահած են իրենց ազգային գաւառական լիզուն. և ասոնցմէ կան շատեր՝ որոնց ընտանիքը թուրքերէն չեն գիտեր. Ասոնցմէ ոմանք Ֆիթէի ժամանակէն և ոմանք քիչ մը ետքը, իսկ չայ տաճիկք անոնցմէ ետքը՝ գրեթէ 180 տարիէ ՚իվեր բռնութեան պատճառաւ հետզհետէ տաճկացեր են.

Բ Ա Ր Գ.

Ծերեղը թէև ընդհանրապէս ըմբոստ, կոռուասէր, աւաղակարարոյ, խորամանկ և ոխակալ էին, այսուամենայնիւ աշխատասէր, ժիր, աշխոյժ, ճարպիկ, աղատասէր, րաջ, չարքաշ և հայրենասէր ալ էին. մկով բանիւ, լեռնականի մը ամէն ձիրքերով զարդարուած. կրօնասիրութեան մասին ալ մոլեռանդ. իսկ հիմա այս լաւ յատկութիւնները պակսած և պակսելու վրայ են օր ըստօրէ. սակայն գէշ ձիրքերու վրայ մեղկութիւն և դանդաղկոտ ծուլութիւն մ'ալ կ'աւելնայ: Հիները օտարութիւն չէին գիտեր գրեթէ. իսկ հիմա ժողովրդեան յաճախ ՚ի Ռուսիա և ՚ի Կ. Պօլիս երթնեկութիւնը՝ բաւական մեղկութեան պատճառ եղած է իրեն. և ասով մեծ քաղաքաց յատուկ և սեպհական եղած մեղկացուցիչ մոլութիւնները՝ լեռներն ալ սկսան երենալ. Կերպով մ'ալ այս օտարութեան արդիւնքն է որ ազդի և տէրութեան վնասակար գաղթականութիւններ ծնունդ կ'առնուն այլ և այլ կողմեր. զորօրինակ Կիւմիշհանէի զայմաղամսւթեան մէջէն քանի մը տարի առաջ քանի մը հարիւր Յոյն ընտանիք գաղթեցին ՚ի Ռուսիա. նոյնպէս տարի մը առաջ ալ Պաֆուայէն դարձեալ ՚ի Ռուսիա գաղթեցին քանի մը հարիւր Յոյն ընտանիք. և եթէ քիչ մը թոյլտութիւն ըլլար՝ մի-

թէ ճանիկէն ու Տրավիզօնէն և անոր գիւղերէն ալ արդէն քանի մը հազար տուն չայր և Յոյնք, թերևս թուրքեր ալ, գաղթած չ'պիտի՝ ըլլային, և ասով թէ ժողովրդական և թէ տէրութեան հրշափ մեծամեծ վնասներ պիտի ըլլային։ Այս շինականները՝ որոնք Տրավիզօնի շուրջը կը բնակին, ընդհանրապէս առանձնասէր, թանձրամիտ, տգէտ, բիրտ, կոռուասէր և զինասէր են, նոյնպէս և պատուասէր, իրենց տներուն իրարմէ հեռու ըլլալուն և սահմաններուն նեղութեանը պատճառաւ։

Սուետրի մէջ խարդախ, խաբերայ և նենդամիտ են. գողութիւն ալ յաճախ կըլլայ մէջերնին և բարձր ու անտառախիտ լերանց վստահելով շատերը ըմբոստութեամբ լիոնախոյս կըլլան և աւազակութեան կը հետեւն։ որոնց մով քաղաքիս բանտերը լցուած են, բոլորն ալ Մահմետական, վասն զի բրիստոնեամբ քանի մը մոլութեանց մէջ գրեթէ բնաւ մաս չ'ունին։ Բաւական հիւրասէր են. և ողորմած՝ գիւղերը շրջագայող դէվրիշներուն և աղքատներուն։ Կերակրոց մասին և զգեստուց խիստ խեղճ են։ Կերակրունին բիշ կաթնեղէն, ոև լուբիա և քալամ ու քազուկ է. հացերնին լազուտ է. ծերերը ցորեն հաց ու տելէ կ'զգուշանային։ հիւանդութենէ վախնալով։ Հագածնին ալ կանեփեղէն և բրդեղէն է. գրեթէ միշտ պատռուուն և ցնցուի։ Զմեռը շատ անզամ ձեան վրայ բոկիկ ու մերկ ժամերով ճանապարհ կընեն՝ մանաւանդ գիշերները մախրի կամ փայտի ճրագով, և քաղաք կուգան՝ շալակաւ բան ծախել և ուտելիք գնելու։

Խիստ պարասէր են, ասոնց պարը խիստ յոդնեցուցիչ է, թերերը երբեմն ցած և երբեմն բարձր կըբռնեն և գողղողալով կամ սաստիկ ցածկուտելով կը պարեն։ Հարսանեաց նուազարանները դեկ, ջութակ, շեփոր և մեծ թմբուկ է. յաճախ հրացաններ կ'արձակեն հարսնեորները, որ մեծ պատիւ կը համարուի հարսանեաց՝ և ուրախութեան նշան։

Ա Ր Հ Ե Ս Տ Տ Ա Ր Ը

Այս գաւառաց շինականներու մէջ չորս հինգ տարի առաջ դպրոց և ուսմունք դրեթէ բնաւ չկար. վասն զի եթէ բանի մը բահանայից և մօլլայից քով քանի մը ուսանողք ալ գտնուէին սովորած և սովորեցուցածնին խեղճ ընթերցանութիւն և գիր մէր միայն. իսկ հիմա Յոյնը սկսեր են իրենց ժողովրդեան վրայ խնամք ցուցնել և քաղաքացի դաստիաներ դրկելով գեղերն ալ օրինաւոր դպրոցներ բանալ. բայց Մահմետականը և ոչ քաղաքն իսկ օրինաւոր ժողովրդական դպրոց մը ունին դեռ. Սոոր համար Յոյնը օրբստօրէ այս կողմերը յառաջանալու հաստատուն յոյս կ'երեցընեն, սակայն թուրքերու՝ մանաւանդ անոնց կրօնականներու մոլեռանդութեան վերցուելուն ու զիտութեանց մէջ յառաջանալուն՝ տակաւին վստահելի յոյս մը չ'երենիր. Այս շինականաց սեպհական արհեստը հին և ասլարդիւն երկրագործութիւն մէ, որ ոչ աշխատելով ծայրը կուզայ և ոչ ուտելով մարդ կըկշտանայ. զրեթէ անփրկելի գերութիւն մը. Կան մէջերը նաև գեղջկական խոշոր հիւսնութիւն զիտցողներ, փայտէ տեսակ տեսակ խոշոր կահ կարասիք շինողներ, ածուխ այրողներ և ձիապանութիւն ընողներ ալ. Ասոնց կանանց ձեռքէն եկած արհեստն ալ երկրագործութիւն և իրենց հաղնելու համար հաստ քթան և զեղջկական ապա դործելու ոստայնանկութիւն է. և աղէկ զիտեն ազնիւ իւղ շինել՝ որ հում սերէ կամ մածնէ կըհանեն. նոյնպէս ազնիւ պանիր և ողուտ ալ (մենծի բէյների), որ երկրին ընտիր բերքերն են, քաղաք իջնող ընտանեաց կանայք այլ և այլ ձեռագործներու մէջ ալ յաջողակ են. Կանայք կերպով մը արանցմէ աւելի կ'աշխատեն շալակելու և երկրագործութեան այլ և այլ մասերու մէջ. Այս շինականաց տները խիստ պարզ և տախտակաշէն ագուցուածք է,

երկու կռնով և երկու կամ երեք մասերու բաժնուած, մէկ կողմն ալ (սուփա) մը ունին. տան մէջ տեղը բոլորչի վառարան մը և վերէն վար կախուած երկաթի հաստ շղթայ մը՝ որմէն կը կախեն պղնձէ սանը կերակուր եփելու համար. տան մէջ մէկ ալ բուռ ունին հաց եփելու համար. Ամեն ընտանիք ունին նաև մէկ մէկ զատ տուն չորս կամ վեց և կամ ութ սիներու վրայ 7-8 թզաշափ գեանէն բարձր և զուտ տախտակէ շինուած, որուն գաւառական բարբառով (Սերանտէր) կըսնեն. և ուր իրենց կալուածին բովանդակ բերքը կըժողովն իրը շեմարան. Կենդանեաց զսմը տանը ներբին յարկն է. օդը խիստ ապականեալ, խիստ խոնաւ ու խիստ մութ. սակայն տներն ու (սերանտերները) օդրանուկ են. Շինականր ընդհանրապէս այր և կին դիշերուան հանդիստը այն վառարանի շուրջը ոտքերը կրակին դէմը բռնելով և նստելով կամ նոյն ձևով խօրի կամ թաղիրի մը վրայ պառկելով՝ կամ ընկողմանելով՝ և վրանին միմիայն կապերտիկ մը առնելով կ'անցընեն. Տներոն կահ կարասին երեր կտոր պղնձէ, այն է՝ տապակ մը և երկու սանէ զատ՝ ամէնը փայտեայ շինուած է:

ՊՈՆՏԱԿԱՆ ԳԱՏԱՌԱՑ ԴԻՎԱՐՈՒ ՎԻՃԱԿ.

Պոնտական գաւառաց գիւղերը դաշտային գիւղերու պէս չեն. այլ խիստ տարած ու ցրիւ վիճակի մէջ են. շատ՝ գիւղերու տանց իրարմէ հեռաւորութիւնը կամ գիւղին երկարութիւնը մէկ ծայրէն միւս ծայրը 3 ժամէն աւելի կըտեէ. և այն գիւղ կոչուած դիրքերը՝ ընդհանրապէս չորս կողմերէն բարձր լեռներով շրջապատուած ու այլ և այլ ձորերու բաժնուած ըլլալով՝ առանձին գաւառակի մը նմանովթիւն կըբերեն՝ քան թէ գիւղերու յիշեալ գիւղերու թաղերն ալ դարձեալ լեռներով ու ձո-

բերով իրարմէ բաժնուած. և ոչ այսչափ միայն, այլ և դիւղերէն ոճանց ամենէն մօտ տնիրն անդամ մէկ մէկէ քանի մը հարիւր բայլ հեռու՝ անտառներով շրջապատուած. ուր ամէն մէկ ընտանիք իր բնակութիւնը իր ժայռուտ կամ անտառուտ կալուածին մէջ տեղը կամ անոր մէկ յարմար եղերքը, այն է՝ խմելու զրին և արտին քով հաստատելով՝ կը տիրէ իրրե առանձին երկրի մը իշխան։

Այս զիւղերու մէջ բնակող ժողովուրդը երկու դասի կը բաժնուին, մէկ դասը կալուածատէր է, որ իրեն սեպհական կալուած, տուն, արտ, ծառաստան, և այլն ունի, իրեն բաւական կամ ոչ. և այս կալուածը ըստ տեղւայն կ'արժէ 1000 – 3,0000. Խսկ միւս դասը (մարապս) կոչուած՝ վարձակալ է, որ ոչ տուն և ոչ ափ մը անգամ հող կամ տունկ մը ունի իրեն սեպհական, ուստի ասոնք բաղաքաբնակ հին տէրէպէյներու զիւղերը ունեցած ընդարձակ երկիրները կը վարձեն ու կը գործեն կամ կիսրար կը բանեն, ինչպէս նաև կալուածը անբաւական եղողներն ալ կընեն։

Ասոնց երկու դասն ալ լնդհանրապէս ծոյլ և օր ըստ օրէ մեղկանալու վրայ են, և թէ բարոյապէս ու թէ նիւ. թապէս խիստ անկարող վիճակի մէջ կը գտնուին այսօր։

ՊՈՆՏՈՍԻ ՇԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴՆԱՆ ՎԱՃԱԿԵ

Պոնտոսի կլիմայն ունեցող երկրի մը ժողովուրդ արդարե պէտք էր բարոյապէս և նիւթապէս հարուստ ըլլար, և արուեստից, զիտութեան ու վաճառականութեան մէջ ալ յառաջացած ըլլալով՝ տէրութեան ալ մեծամեծ օգուտներ հասցնէր. սակայն դժբաղդաբար այս վիճակէն խիստ հեռու և թշուառ ու կարեկցութեան արժանի է։

Աս ժողովուրդը երկրագործութեան արհեստը գործելու մասին խիստ տկար ու անկարող է բարոյապէս։

վասն զի ոչ թէ միայն այս ազնիւ արհեստը դեռ ևս
նահապետական կերպով կը զործուի և ժամանակին պա-
հանջանացը համեմատ սովորող կամ գործող մը չ'կայ
զայն բովանդակ վիլայէթիս մէջ՝ որ օրինակ և խրախոյս
ըլլայ այլոց, այլ և ոչ իսկ երկրին յառաջադիմութեան
ու վաճառականութեանը նկատմամբ երկրագործութեան
ունեցած մեծամեծ օգուտները ճանչնալով ուշադրութիւն
ընող մը կայ անոր վրայ։ Եւ հարկաւ ասիկա այսպէս
պիտի ըլլայ, քանի որ Պօլսոյ մէջ կամ գաւառները երկ-
րագործութեան յատուկ դպրոցներ և պաշտօնեայներ կը
պակսին տէրութեան կողմէն, քանի որ այս ամենակա-
րնոր արհեստին ծառայող յատուկ լրագիր մը չ'կայ տա-
կաւին բովանդակ Թուրքիոյ մէջ, որ գոնէ ժողովրդեան
հետարրիդր մասը կարդայ ու փորձերու ձեռնարկութեան
սիրտ առնէ։ քանի որ գաւառական կառավարութեան
պաշտօնէից կողմանէ երկրագործութեան վրայ մասնաւոր
սէր և խնամք մը շ'տեսնուիր, և վերջապէս քանի որ
գիւղերու մէջ ժողովրդական դպրոցներ կը պակսին, ո.
քոնք կը լայնային մայր և դայեակ ըլլալ թէ բարոյականին
և թէ նիւթականին, իր ապագայն մտածող ժողովրդեան
հացի խնդիրը ապահովցընելու միջոցներ ցուցնել և դիւ-
րացընելով։

Սյո ժողովուրդը ընդհանրապէս նիւթական մասին
ալ անկարող և միանգամայն դառն աղքատութեան ու
թշուառութեան մէջ է։ վասն զի ծուլութենէ զատ՝ տըն-
տեսական խնայութեան ալ անտեղեակ ըլլալով՝ ոչ սահուն
և անզին ժամանակը, ոչ իր փոքրիկ կալուածը և ոչ իսկ
անոր արտադրած նուազ արդինքը գիտէ օգտակար կեր-
պով գործածել, որով անհնարին կը լայ իրեն հանգստու-
թեան երես ալ տեսնել։

Երկրի մշակութեան կերպը խիստ դժուարին, այս-
ինքն երկմատանի քահով (զաթալ պէշ) ու փայտատով

է, և ոչ թէ եղնով, ողը խոնաւութեան պատճառաւ և երբեմն երաշտութեան, ինչպէս ուրիշ տեղերու երկրագնդաց ալ կը պատահի՝ անյաջող, արտը փոքրիկ և հողը ծերացած, աղբով գօրացընելու ալ կարողութիւն չ'ունին, կէս մ'ալ (մարապահութեամբ) վեց ամիս աշխատելէ յետոյ՝ առած արդինքը 3—4 ամիս հազիւ բաւականանալով իրենց ընտանեացը՝ դարձեալ թէ կալուածատէր և թէ (մարապայ) կարօտութեան և թշուառութեան մէջ թագուած կը մնան. ուստի գրեթէ ինն պմիս այր և կին՝ մանաւանդ ձմեռը մինչև 10—12 ժամ տեղէ շալակաւ փայտ ու ածուխ կրելով քաղաքէն (լազուտ) կը գնեն և նորէն շալակաւ գիւղ կը դառնան՝ ընտանեօք սովորմահ չկորնչելու համար:

Եինական ժողովրդեան հազիւ թէ հարիւրին հինգը տարեկան ուտելու հաց կ'ունենայ և չափաւոր հանգիստ կը վայելէ, իսկ միւս թշուառ մասը ստիպուած է միշտ իր շալակաւը քաղաք իշնալ ու անկէ ուտելիք կրել իր ընտանեացը: Այս գործը թեթև ու քանի մը ժամու բան չ'է. այլ քանի մը աւուր. վասն զի նախ լեռը պիտի ելլէ, որ իր գիւղէն քանի մը ժամ հեռու է, հոն ծառ պիտի կտրէ. տտաղձ տաշէ, և կամ ածուխ այրէ. և անկէ շալակաւը բերէ և իր տունը պատրաստէ, և ապա քաղաք իջեցնէ. ու նորէն ուտելիք շալակելով ետ դառնայ: Անտառի գործը արանց յատուկ է. ինչպէս տաւարը դարմանել հոգան ալ կանանց, իսկ շալակելը երկուքին ալ անխտիր և հաւասար է: Ասոնց շալակած բեռը 20—40 հոխայի չափ կըլլայ, և շալակաւ քաղաք երթեւեկող շինականներէն շատերը՝ անգամ մը քաղաք գալու և դառնալու համար 20 ժամու չափ ճանապարհ կը քալն. թող անտառին մէջ կացնով բանած և ածուխը այրած ժամերն ու օրերը, և այս ամենուն փոխարէն առնելիքը 10—13 դահեկանէն աւելի չկրնար ըլլալ երբէք.

և այս ամենը ընդհանրապէս աշնան ու սաստիկ ձմբան
ցուրտ ատեները կընեն՝ կիսամերկ և շատ անգամ ալ
բոկ։ Այս ժողովուրդը որ չուանը ուսէն շնչեր, բեռնա-
կիր անուանել աւելի արժան է՝ քան թէ երկրագործ։ ո-
րոնց ուսերուն ու կուրծքերուն ոսկորներն անգամ բնա-
կան կազմութիւնէ օտարացած են՝ իմանկութենէ հետէ
բեռնակրութեամբ ուսերը չուանսվ և մէջքերը բեռի տակ
ճնշուելով։ Այս նուաստ դրութիւնը որ ուրիշ շատ եր-
կիրներու համար անտանելի է և մարդկութեան ստրկու-
թիւն, այսու ամենայնիւ այս ժողովրդեան յատկութիւն ե-
ղած է շալակ շալկել և ըստ սովորութեան քառմանով
բուրդ մանել կամ գուրպայ հիւսելով ճանապարհ երթալը։
(Ինչպէս կանայք շալակ շալկել և երկրագործութիւն ընե-
լու վարժ են այս երկիր, նոյնպէս ալ արք բուրդ մա-
նել և գուրպայ հիւսելու) Ժողովուրդը այս ամէն շար-
շարանը իր երկրին լեռնային դրիցը պատճառաւ կը
կրէ, ուր կառք բանել բնականաբար անհնարին ըլլալէ
զատ՝ շատ մը ճանապարհ կոչուած տեղերն անգամ ձի և
զորի ալ շնչենար բանիլ, որով շնչականը թէ արտէն և թէ
անտառէն 'ի տուն և թէ 'ի բաղար փոխադրելիր բանե-
րը թէ իր ուտելիր պարէնը և թէ կենդանեացը կը ստի-
պուի շալակաւ կրել՝ դժուարին և վախուտ ճանապարհ-
ներով, և դոյզն գործի համար օր ու ժամանակ կորսն-
ցնել։ Ուրիշ երկիրներ կենդանիք մարդոց համար կ'աշ-
խատին, իսկ այս երկրի շնչականը կերպով մը կէնդա-
նեաց համար ալ կ'աշխատին, վասն զի թէ իրնեց աղ-
քատութեան, թէ դարմանի նուազութեան և թէ ճանա-
պարհներու դժուարութեան համար ձի շնչն կրնար պա-
հել, և այս պատճառաւ շատ գիւղեր 20—25 տան մէջ
բեռակիր ձի մը ունեցող հազիւ կը գտնուի։ Ուստի եթէ
այս երկրի միայն ձորամիջերէն, որոնք 8—12 ժամ եր-
կարութիւն ունին, մինչև ծովեղերը և անկէ ալ քաղաք

հաղորդուելու կառուղիներ շինուէին, որ խիստ դիւրին է լիոներու նկատմամբ, թէ ժողովրդեան և թէ տէրութեան մեծ օգուտ կըլլար և շատ մը առաջ կերթար վաճառականութիւնը:

Այս չուանով շալակաւոր բեռնակրութիւնն ալ իթը-շուառ ժողովուրդը շ'կշտացնելով՝ ընդհանրապէս քրիստոնեայ և մահմետական միշտ աղքատ, կարօտ և միշտ պարտաւոր վիճակի մէջ են. և անզամ մը պարտուց տակ ընկնելէ յստոյ՝ շասեմ անհնարին. սակայն խիստ դժուարին է անկէ ազատիլը. և գրեթէ հրաշք, նախ տոկոսի ծանրութեան պատճառաւ. և երկրորդ երկրէն վաճառականութեան բերք և իր ընտանեաց ալ բաւականաշափ պարէն շ'կրնալ արտադրելուն համար: Երկրագործը աւելի արդիւնք ձեռք բերելու համար կամ ընդարձակ ու դօրաւոր երկիր կուղէ. և կամ հարստութիւն և ուժ՝ իր փոքրիկ կալուածը աղքով և ուրիշ միջոցներով գօրացնելու. Շինականաց շատերը ինչպէս ըսինք արդէն՝ վարձակալ են, շատերն ալ բաւականաշափ երկիր չունին, և զայն ալ օրինաւոր կերպով մշակել չեն դիտեր. ան ալ որ բաւականաշափ երկիր ունի՝ մշակելու համար ստակ և պարապ ժամանակ չունի, իր կորդ կամ անտառային երկիրներէն նոր արտեր պատրաստելու համար (քիլիզմա) ընելու. Ցրապիզոնի շուրջը մէկ արտավար տեղը հազիւ հարիւր դահեկանի (քիլիզմա) կրնայ ըլլալ՝ ուրիշի փոքրել տալով: Երկիրը (քիլիզմա) կընեն փայտատով կանգնոյ մը շափ խոր փորելով, և տակի հողը եթէ ազնիւ է՝ վրան դարձնելով: Այս գործը ձմբան յատովէ, վասն զի ամբողջ ամառն ու աշունն ալ այլեայլ ապարդիւն գործերով կըզբաղի շինականը. և ձմեռը եթէ միջոց և ժամանակ ունի՝ այս գործով կըզբաղի: Խսկ աղքատը եթէ իր բեռնակրութեան գործը թողլով՝ գարնան ցանելու համար նոր արտ պատրաստելու հետ ըլլայ՝ ըիշ մը աւելի

բները գոյացնելու յուսով, կը հարկադրի նոյն տարին պարտքով իր ընտանեաց հացը հոգալ և նոր պարտքի տակ մտնելու. նոյնպէս ալ եթէ ուրիշի ձեռօք (քիլիզմա) ընել տայ և նոր պարտք աւելցնէ՝ ալ յոյս չկայ անկէ պատելու, և իր ապադայն կարգադրել և բարւոքելու. վասն զի նոր երկրին բերքը երբէք չկրնար այն պարտքերը վճարելու. քանի որ լազուտէն ու լուրիայէն զատքան մը չպիտի կրնայ ցանել. և ան ալ դարձեալ իր ընտանեացը կամ բաւականանայ և կամ ոչ. իսկ բանած երկիրը օրըստօրէ վերստին ուժաթափ ըլլալով կըծերանայ, բերքը տարոց տարի կընուազի, և վերջապէս օր մալ իր արդիւնքը խսպառ կըզանայ թշուառին՝ ղանիկա մտատանջութեան ու մեծ տազնապի մէջ ձգելով:

Այս ժողովրդեան ապրուստն ու դիւրակեցութիւնը 20—30 տարի յառաջ արդի վիճակէն խիստ տարբեր աղէկ ու ապահով էր. թէպէտ ան ատենները (տէրէպէյի-ութեան) հարստահարութիւնները պակաս չէին, սակայն արքունական տուրքերն ալ խիստ թեթև էին. ժողովրդեան բռնած երկիրն ալ հիմակուանին նայելով թէ ընդարձակ էր և թէ ուժով ու պտղաբեր. զրեթէ ամեն տուն բաւական բեթակ ունէր, թէ տանը դուռը և թէ լեռը անտառի մէջ, ծառերու վրայ մէկ մէկ կամ 30—40-ը մէկ տեղ զետեղուած՝ որ դիտելու արժանի բան մէ. նոյնպէս շատերը առաջ կովի և ոչխարի մեծ հարստութիւն՝ և պարարտ ու բերրի արտ ըլլալու համար ալ անտառներ՝ որոնցմով կըբաւականանային և հանդիստ կապրէին.

Սակայն հիմա ժողովուրդը շատցած և հետզհետէ զատ տներու բաժնուած ըլլալով՝ թէ նոր արտեր պատրաստելու յարմար կորդ երկիր և անտառ շմնաց, և թէ ձեռքերը եղած երկիրն ալ խիստ անբաւական և տկարէ. բաւական կենդանի ալ չունի՝ որ անոնց աղբովը եր-

կիրը զօրացնէ ու պարարտացնէ. վասն զի աղքատը արդէն անկարող է ամեն կերպով. իսկ հարուստն ալ ձմեռը դարմանելու դժուարութեանը համար աւելի կենդանի պահելէ կըխորշի. Ասոր համար շնականաց մեծագոյն մասը փոխանակ եղնով վարել ցանելու իրենց արտը՝ (թէպէտ տեղ տեղ եղ ալ չկրնար գործածուիլ, շատ զառի թափ ըլլալուն պատճառաւ.) նախ երկմատանի բահով կըլստուեն (կըփորին), և յետոյ ամեն տեսակ սերմ փայտատով կը ցանեն. և գործի ատեն վարձրով եղ քիչ գտնուելուն և վարձրն ալ սուզ ըլլալուն համար՝ շատ տեղեր մարդիկ եղանց պէս զոյդ լծուելով արտերը կըտափանեն և շատ անգամ ալ կալի մէջ կամնասայլով ցորեն կը ծեծեն այս կերպով. Թէպէտ տեղ տեղ ոչխարի փորբիկ հօտեր կըգտնուին, և այս երկիրներ սովորութիւն էէ ոչխարի տեարց ստակ տալ և արտը ոչխարի մէզով. ու աղրով զօրացնելու համար գիշերները հօտն արտին վրայ պառկեցնել. սակայն աղքատը այս միջոցէս ալ կըզրկուի վճարելու ստակ չունենալով. և ի կարօտութենէ ստիպեալ՝ անհնարին կ'ըլլայ իրեն իր տաժանելի բեռնակրութեան արհեստը ձգել ու ազատիլ.

Թաշիրն ու տէրութեան տուրբերն ալ երբեմն հացի խնդիրը մոռցնել կուտան աղքատին, բերք չըլլար. սակայն տուրք և թաշիրը կ'ուզուի խստութեամբ. եղն, կով և տան կարասի, պղինձ անխնայ կըծախուի՛ ընդդէմ օրինաց. սակայն շատ անգամ խեղճը դարձեալ պարտաւոր կըմնայ. Ստակի մասին ալ ամեն տեսակ ստակ չընդունուիր կառավարութեան կողմէն, պղինձ ստակը եթէ ընդունի՛ դահեկանը ՅԵ փարայի հաշուով կառնէ. իսկ ճերմակ մէճիտիէն քսան դահեկանի, քանի որ աղքատը քսան երերի գրեթէ կառնէ. Թողնենք թաշիրի ծանրութիւնն ու քանի մը տարուանս վերադիրը, որուն համար աղքատը կըսպասէ թէ այս ²⁵/₁₀₀-ը Երբ պիտի վերցուի

իր վրայէն։ Ծանր չէինք ըսեր թաշիրին՝ եթէ ժողովուր. դը երկիր մշակել և բերք առնել դիտնար. մէկ խօսքով կատարեալ երկրապործ ըլլար. և երկրագործութիւնն, արհեստն ու վաճառականութիւնը ծաղկած ըլլային երկրիս մէջ. բայց դժբաղդաբար ասոնք այսպէս չեն.

Մոոցանք ըսել թէ այս երկիրներ թաշիրը տասանորդ չէ՝ այլ (քէֆշի) վրայ կտրուածք է և ստակ կը վընարուի. Ահա այս կերպով աղբատութեան և թշուառութեան դուռը հետզհետէ կը լայնայ այս ժողովրդեան առջին, և ինը յայտնի կը տեսնէ որ բանած արտը օրըստօրէ կը ծերանայ և թաշիրը կը գորանայ. ինք անօթի կը մնայ և զավտիէն տուն եկած բռնի հաց կ'ուղէ և տուրքն ալ հետը խստիւ կը պահանջէ. զոր բատ երկրին սովորութեան մինչև չառնէ՝ տնէն շելլեր. խեղճ աղբատը կը շուարի, ձեռքէն ուրիշ արհեստ մը բան մը չգար, տարսց տարի պարտքին տոկոսը կը դիզուի, թէպէտ գեղացւոյն տոկոսը ծանր է միշտ՝ սակայն վարկը կը պակսի և ոչ որ պարտքսվ ստակ կը հաւատայ անոր. վասն դի վճարելու միջոց մը չունի բաց ի իր փոքրիկ կալուածէն, զոր արդէն բանի մը կտոր ընելով պարտատեարց զրաւի դիած է. կառավարութիւնն ալ ժողովրդեան դիւրութեանը համար մնտուկներ չունի, ուր դիմելով ձեռնտուութիւն մը դտնայ. ուստի կը մնայ անկարող և անգործ. իր զգացմոնքը կ'կորսնցնէ. վերջապէս կը յուսահատի և ծուլութեան գիրկը կը կիմէ. և ուր կը հանգչի իր ընտանեօքը բաղցեալ, մերկ ու բոկ։

Սյսպէս ժամանակ մը յուսահատութեամբ թմբրելէն յետոյ՝ կը տեսնէ որ իր վիճակակից դրացիներէն մէկը Կ. Պօլիսէն, Փաշէն, Սօխումէն, Զէրքէղիայէն և կամ Կերջէն կուգայ՝ բանի մը դահնեկանով. իսկոյն կը սթափի, և իր թշուառ զաւակաց վրայ նայելով գութը կը շարժի և վերջին արիութեան կայծ մը կարծարծի իր ջիղերուն

մէջ. իսկոյն ճամբայ կելէ երթալ յիշեալ քաղաքներն ու երկիրները բեռնակրութիւն կամ պարտիզանութիւն ընելու, և շատ անդամ մէկ տարի չեղած՝ կամ մահացու հիւանդ կը վերագանայ ան տեղերէն և թիշ միջոցէն թշուառ կը մեռնի. և կամ մահուան լուրը կը հասնի իր խեղճ ու թշուառ որբերուն, որոնք անդերեզման մեռելի նման աստանդական կը տատանին ու կը թափառին, և շատերն իսկ կամ թշուառ մահուամբ և կամ այլնայլ ազգաց մէջ սփոռելով կամ տեսակ տեսակ մոլութիւններով անժառանդ կը կորսուին. Արդեօր Թիւրքիոյ մէջ ազգային կամ արրունական որբանոցներ զտնուելուն պատճառաւ նրչափ այսպիսի կորուստներ կը լլան ու պիտի ըլլան:

Այս յուսահատ ծոյլերէն ոմանք և մաս մալ դժգո՞ն կալուածատէրներէն, որոնք բաղաքական կենաց ցաւերուն բոլորովին անտեղեակ են հանգիստ գտնալու յուսով ընտանեօր հանդերձ ի բաղար կիջնան, և հոն հիւսնութեամբ, տակառագործութեամբ, բեռնակրութեամբ, զրկիրութեամբ և կամ գարձեալ երկրագործութեամբ կը զբաղին. և իրենց տղայըն ալ ոչ թէ ուսման, այլ մեծաւ մասամբ սափրչութեան աշակերտ կուտան, դիւրուսանելի և շահաւոր համարելով զայն:

Սսոնք քաղար իջնելով արդարե շալակաւոր բեռնակրութենէ թիշ մը հանգիստ կը գտնեն. սակայն ապրուստի նեղութիւնն ու թշուառութիւնը շուառվ մը հոն ալ կը հասնի և բաղաքական պճ նասիրութիւնն ու զիշխանութիւնն ալ իրեն օգնական գտնալով աւելի ևս անհանգիստ կընէ զանոնք. և որովհետե բաղարն ալ այս կարգէն մարդիկ արդէն շատ կը գոնուին և որոնք նոյն արհեստներով կը զբաղին, այս նորիկները անոնց գործին և հացին ընկեր ըլլալով զանոնք ալ իրենց հետ իսպառ կը թշուառացնեն. նոյնպէս ասոնց արհեստի աշակերտող տղայըն ալ բանի մը տարիէն արհեստաւոր ըլլալով եւ

բաւական գործ չգտնելով և պճնազարդութեան վարժուելով իրենց վարպետներով մէկտեղ օրըստօրէ կը թշ. շուառանան։ Հոն կտկին այնուհետև թէ գեղջուկ և թէ գեղջկազարդութ արհեստաւոր կտոր մը հացի համար օտարականութեամբ այլ և այլ երկիրներ թափառել, կամ գաղթականութիւն մը երևակայել. և վերջապէս իրենց յոյսը արհեստներէ և քաղաքական կեանքրէ կտրելով վերստին երկրագործութեան վրայ հաստատել, նախընթաց փորձէն խրատուելով. և երկրագործութիւնը միայն ճանչնալով բարեկեցութեան և անդորրութեան ապահով միջոց՝ կըսկսին իրենց աշըը տսդիս անդին դարձնել և բարեր ու ընդարձակ երկիրներ վինտուել. Եւ յիրաւի այս ժողովրդեան փրկութեան միակ միջոց կամ գաղթականութիւնը պիտի ըլլայ, և կամ իր երկրին մէջ երկրագործութեան արհեստին ծաղկելը, և գաւառիս մէջ ճանապարհաց ու դպրոցաց շատնալը. Եթէ հարիւրաւոր հայ զոհեր առնող և հայ ընտանիքներ թշուառացնող 2էրքէղիայի ծովեղերը մաքուր և անվնաս օդ ունենար՝ կը կարծեմ թէ մինչև հիմա միայն մեր ազգի թշուառներէն թէ քաղաքէն և թէ այս երեք գաւառներէն 1000-ի չափ ընտանիք գաղթած էին. թող ճանիկի վիճակի հայերն որոնք 2էրքէղ գաղթականաց երեսէն մեծամեծ զրկանքներ ու նեղութիւններ կրեցին ցարդ և կը կրեն. Յոյնք այս գաղթականութեան դրօշակիրը պիտի ըլլային և թիւրքերէն ալ եթէ կարելի ըլլար շատեր պիտի ընկերանալին, վասն զի անոնց վիճակն ալ քրիստոնեայներէն լաւ մը չէ. և ամենուն վիճակն ալ օրըստօրէ դգալի կերպիւ ամենայն մասամբ խիստ նեղանալու վրայ է. Վասն որոյ այս երկրէն օր մը մեծ գաղթականութեան մը ելլելը խիստ հաւանական կերեի ամեն կերպիւ.

Ժողովրդեան խիստ աղքատ մասը այսպէս անհանգիստ թափառելու և օտարականութեամբ ու թշուառու-

թեամբ փճանալ կորսուելու տեղ՝ աղէկ կըլլար եթէ Տրապիզոնի հարաւային կողմը եղող ընդարձակ երկիրներու անշնչն վայրիրը այս թշուառ ժողովրդէն գաղթականներ հանելու փորձ մը փորձէր տէրութիւնը. փորրիկ խնամք մը ի սկզբան խեղճերուն ցուցնելով՝ ինչպէս որ Զէրքէզներուն։ Կը յուսացուի որ թէ այս թշուառները հանգիստ կտոր մը հացիկ ուտելով՝ առատագութ տէրութեան օրհներդու կըլլային, և թէ տէրութիւնը քանի մը տարիէն մեծ օգուտներ կը բաղէր, թէ ամայի վայրերը շէննալ ն տեսակ տեսակ գէշութիւններն ու թշուառութիւնները պակսելով, և թէ գաղթականութենէն արքունի գանձուն մեծ հասոյթ գոյանալով։ Թէպէտ այս երեր գաւառաց լեռնասէր ժողովրդէն ալ՝ մանաւանդ հայերէն և մահմետականներէն (վասն զի յոյնք չափաւոր կենցաղագէտ և աշալուրջ ըլլալով դիւրաթեր են ամեն կողմ.) կը կասկածուի թէ աւելի սա լեռներն ու անտառները իրենց կոյր տղիտութեամբը թշուառութեան գերեզման ընտրեն՝ քան յիշեալ բարեբեր երկիրները հանգիստ բնակութիւն. վասն զի ասոնց աշքերը նոյն և Յունաց ալ Ռուսիայի երկիրները բացուած է և ոչ այն կողմերը, սակայն տէրութեան օգուտը կը պահանջէ, որ ժողովրդեան օր մը 'ի Ռուսիա գաղթելու կասկածը անհետացընելու համար այս փրկարար միջոցը Տէրութեան և ժողովրդեան օգտակար կերպիւ 'ի գործ դրուի օր յառաջ։

Երբ այսպիսի գաղթականութեամբ երկիրը քիչ մը թեթևնայ՝ ան ատեն բնակչաց ապրուստն ալ կը դիւրանայ և հաց գնելը կը պակսի, գաւառին մէջ ճանապարհ. ներ շինուելով, գպրոցներ բացուելով և կառավարութեան ու հարուստ կալուածատեարց և միքտարաց կողմէն ալ հոգ ու խնամք տարուելով թթենի, այգի, բրինձ, թութուն և ուրիշ տունկեր ու բերբեր պատրաստել և արտադրելով՝ վաճառականութիւնը կը յառաջանայ, և քիչ

ժամանակէն ժողովուրդը կերպարանափոխ կըլլայ
թէ բարոյապէս և թէ նիւթապէս, և զաւառն ալ տէ-
րութեան արդինաւոր զաւառներէն մէկը կըլլայ, եթէ
քաղաքիս նախորդ վալիներէն Մուլսլիս էմին փաշայի
յորդորներուն և օրինավին հետևած ըլլային զաւառիս
կառավարութեան պաշտօնեալը և հարուստ կալուածա-
տեարք' հիմա երկիրը մեծ յառաջադիմութիւն ըրած պի-
տի ըլլար, Բայց ժողովուրդը տգէտ և ծոյլ և ինք իրեն
բան մը ընելու անկարող ըլլալով՝ օր ըստ օրէ թշուա-
ռութեան մէջ կը թազուի:

Կերպով մը այս ժողովրդեան աղքատ մասը մեզա-
դրելի չէ. վասն զի մշակելի կալուածոց նուազութիւնը զի-
րենք կասկածուտ կրնայ ընել. որով նոր զործերու և
փորձի իսկ չեն համարձակիր ձեռք զառնելու. Զատ ան-
գամ ըսուած է շատերուն թէ գետնախնձոր, սոխ, ծխա-
խոտ, բրինձ, թթենի, այդի, մեկոն, տորոն ևայն մը-
շակելու ձեռք զարկիք. և թիշ փորձէն համոզուելով ընդ-
հանրացուցէք ու օգուտ քաղեցէք, սակայն միշտ սա պա-
տասխանը առնուած է. «փորբիկ արտս որ իմ ուտելիք
պարէնիս մէկ մասը արդէն կրնայ ինձ մատակարարել.
այսօր նոր փորձի մը համար խափանեմ զայն, իսկ եթէ
փորձը չ'յաջողուի՝ ինչ ընեմ ան ատէն, վասն զի աշխա-
տութիւնո ՚իզուր երթալէն՝ արտս խափանուելէն՝ և ու-
տելեաց համար ալ մաս մը աւելի պարտք ընելէս յետոյ՝
թաշերն ալ իզուր պիտի ստիպուիմ վճարել, և փորձի
յանդգնելուն համար՝ պարտքէ ալ յաւիտեան աղատուելու
յոյս չ'պիտի ունենամ», չարուստն ալ կ'ըսէ թէ «արտս
զիս կըբաւականացնէ, ինչ պէտք է ինձ փորձի ձեռնա-
մուխ ըլլալ՝ ու եթէ չ'յաջողի՝ իբրև անփորձ պարտքի
տակ իյնալ. իսկ եթէ թիշ մը յաջողիմ իսկոյն թաշերի
տուրքիս վրայ չափէն աւելի յաւելում մը պիտի ըլլայ՝ ո
րով օտարին՝ բան ինձի համար աշխատած պիտի ըլլամ»

Ահա այսպէս ժողովրդեան տղիտութեան և կասկածոտութեանը համար, նոյնպէս պաշտօնէից և կալուածատեարց ու միբտարաց անհոգութեան ու տղիտութեան պատճառաւ եբկիրը միշտ յետադիմութեան մէջ պիտի մնայ, թէ նիւթապէս և թէ բարոյապէս, որ թէ ժողովրդեան և թէ տէրութեան մեծամեծ վեասներու առիթ կրնայ ըլլալ՝ ինչպէս յայտնի տեսնուեցաւ. ուստի այս տխուր վիճակն երկիրն ու ժողովուրդը ազատելու համար՝ պէտք է կառավարութիւնն իւր ուշադրութիւնը, կալուածատէրն իւր կալուածը, և դրամատէրն իւր ստակը այս նպատակին ծառայեցնեն:

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿ ՊՈՆՏԱԲՆԱԿ ՀԱՅՈՑ

Ինչպէս Տրավիդոն քաղաքի, նոյնպէս և անոր շրբարնակ շինական չայոց չայաստանի որ գաւառներէն, որ թուականերուն և ինչ մասնաւոր պատճառներով զաղթելը, և Տրավիգոնէն ու իր գեղերէն ալ որչափ մասնա. ուր գաղթականութիւններ ՚ի Կ. Պօլիս, ՚ի Խրիմ և կամ ուրիշ հեռաւոր կողմեր զրկելը՝ արդարն խստ դժուարին է դիտնալ, սակայն սա յայտնի է որ Պետրոս Գետադարձ հայրապետի դեսպանութեամբ Տրավիգոն եկած ատեն՝ հոն հայ վաճառականաց փոքրիկ զաղթականութիւն մը կայ եղեր. և Ռուբինեանց սկիզբները ծարօնցի բաջազուն իշխանաց Կ. Պօլսոյ կայսերաց դէմ Տրավիգոնի մէջ բռնացած ատենները՝ չայաստանի թըշուառութեան պատճառաւ դաղթականութիւնները սկսած ըլլալով, Տրավիգոնի փոքրիկ զաղթականութիւնը մեծ ցած և թերևս շրջակայներն ալ տարածուած ըլլալու էր, և ասոր ավացոյց կրնայ համարուիլ Տրավիգոնէն Կիլիկիոյ ժողովներուն չայ եպիսկոպոս երթալը, նոյնպէս մեծ ավացոյց կրնայ համարուիլ՝ Յունաց վերջին Կոմենսուններու ատեն չայ զաղթականութիւն թէ քանի մը ե.

կեղեցի և թէ վանք մը ունենալը 'ի Տրապիզոն, որոց արձանագրական յիշատակարանները դեռ ևս անջինջ կը մնան։ Բայց սակայն նոյն դարերու մէջ Տրապիզոնի շուրջը շինական չայ գտնուելուն վրայ մինչև ցարդ բնաւ յիշատակութեան մը պատահած չ'եմք. թերես եթէ կային ալ նէ՝ ֆեթիճի ժամանակ իրք լիոնցի պատերազմիկ ժողովուրդ ապստամք համարուելով՝ կամ բոլորովին ջընջուէր և կամ կրօնափոխութեան ստիպուեր ու խոլամութիւնը ընդունելով անյայտացեր են. Ինչպէս ապացոյցները յայտնի կ'երեան ուրիշ ժաղովրդոց վրայ, որոնք նոյն դրուն մէջ խոլամութիւնը ընդունած են։

Յայտնի բան մէ որ Տրապիզոն 'իբնէ անտի չայստանի դրացի և Յունաց կայսրութեան երկիրը ըլլալով և մերձակայ քաղաքաց վրայ մասնաւոր առաւելութիւն մը ունենալով՝ հարկաւ չայստանի ամէն կողմերէն գաղթականութիւններ պիտի ընդունէր, որով այսօր Տրապիզոնի հայ գաղթականութիւնը քաղաքի բնակչաց մեծագոյն մասը պիտի կազմէր, (հիմա հազիւ մէկ տասնորդը կայ). Եթէ կրօնական յաճախ հալածանքներէ և քաւական հարստահարութեանց պատճառաւ այն գաղթականութիւնը 'ի Կ. Պօլիս, 'ի Խրիմ և ուրիշ երկիրներ չ'գաղթէին, և մէկ մասն ալ հետզհետէ չ'տաճկանար, ինչպէս այսօր թէ քաղաքիս և թէ շրջակայ դիւդորէից մէջ հարիւրաւոր տաճիկ ընտանիք և տոհմ կրնամք ցուցանել, որոնց պապերը, կամ հաւերը տաճկացած են։

Տրապիզոնի շինականաց արդի գաղթականութիւնը գրեթէ ասկէ դար ու կէս առաջ Գարատէրէէն հոն եկածէ. Գարա-տէրէ արդի Սիւրմէնէ գաւառի մէկ գլխաւոր մասն է. Գարա-Տէրէի մէկ ծայրը Թորոսոնցի լերան հիւսիսային երեսէն սկսելով՝ միւս ծայրը կը հասնի ծով-եղերեայ Սիւրմէնէ աւանը. 18 ժամ երկարութեամք ամուր ձոր մ' է Սև ծովու և Բայրերդի սահմանին մէջ.

մեծ ու գլաւաւոր զիւկն է Այլին. ձորին գրեթէ կեդրոնը. Այս ձորին ծովեղերեայ մասը Միւրմէնէ կը կոշուի. Հայոց որ գարուն հոն գաղթած ըլլալը՝ որոշ չ'գիտցուիր, սակայն երկու կողմերէ ու երկու պատճառներով եկած կ'երեխ այս ժողովուրդը, առաջնը Սպերու և Բայբերդի դաշտերէն Թորոսոնցի կողմով, կամ բռնութեամբ և հարստահարռւթեամբ փախչելով, և կամ երկրին տէրէ պէյիներէն երկրագործութիւն կամ անոնց թշնամեաց դէմ պատերազմելու հրաւիրուելով. և երկրորդը՝ Համշէն մեծ դաւառէն փախչելով՝ յատուկ կրօնափոխութենէ ազատուլու նպատակաւ, ասկէ զրեթէ 170 կամ 180 տարի առաջ և բաւական տարիներ ետքը երբ Համշէն դաւառը մնացող ժողովուրդը ամբողջ տաճկացուցին և հալածանքը Դարաւակէի վրայ դարձաւ՝ հազարաւոր ընտանիք ամէն բանէ զրկուած փախան Ցրապիզոնի, Օրտուի, Խնիայի, Զարշամպայի, Պաֆուայի, Մինոպի և մինչեւ Ատապազարի դիւղերն ու բաղարները՝ որոնք մինչև հիմա իրենց բնակած երկիրներուն մէջ ալ ոչ միայն իրենց գաւառական հայ բարբառովը, այլ և անուամբ իսկ ուրիշ հայերէ կը զանազանին Համշէնցիք կոչուելով. և ամէն տեղ քրիստոնեայ և Հայ կապրին. իսկ Գարատէրէի քանի մը հազար ընտանիքն՝ նոյնպէս և Համշէնի ամենըն ալ մահմեղական եղած և քրիստոնէութեան ամէն նշան կորուսած են. միայն ազդային զաւառական բարբառը իբրև մայրենի սեպհական լեզու զուտ պահած են և ամենն ալ ցարդ կը դործածեն, սակայն այս մասին բաւական նեղութիւն կը կրեն իրենց մոլլաներէն, որոնք տասներկու տարիէն 'իվեր՝ երբ բանի մը ընտանիք ասոնցմէ՝ վերըստին բրիստոնեայ եղան, հայ լեզուն արգելել կը ջանան և եօթը հայերէն բառը մուսուրմանի մը համար հայհոյութիւն մէ ըսելով՝ ժողովուրդը կը զաղթակղեցընեն ու կը վախցընեն:

Սակայն քանի որ Վրացիներէ և Յոյներէ դարձող մահմելականը իրենց մայրենի լեզուն կը խօսեն՝ կերսի թէ ատոնք ալ իրենց լեզուն միշտ պիտի խօսին։

Ինչպէս կըստուզով Ուզի Մամիրա գիւղի տ. Յովակիմ բահանայի քով զտնուած հին շարականի մը մէջ զրուած յիշատակարանէն՝ Դարագէրէի ամբողջ տաճկանալը և վերջին մաս մը մնացողներու սպաննուել և փախչելը՝ Հայոց ՌՄԻԹ թուին պատահեր է. սակայն հալածումը շատ առաջ սկսեր և ոտք ոտք յառաջացեր ու տաճկացող հայոց ձեռքով ալ շատ անօրէնութիւններ ու արինանեղութիւններ ըլլալէ յետոյ՝ վերոյ յիշեալ թուականին Դարատէրէի վերին ծայրը, Խալսազ գիւղը վերջացեր է. ուսկից փախեր է գիշերայն և այս յիշատակարանը գրող տէր Կարապետ անուն առաջինի բահանայն, որ յիշեալ տէր Յովակիմի ազգականն ու կառատուն է, ծերերը կ'անապեն թէ այս հալածանաց միջոցին հրաշք մը պատահեր է այսպէս։ Հալածանը հանող տէրէպէյին, որուն անունը Ղուռուֆ Մէհմէդ եղած է, բառասուն հայ հրիտանարդ ընտրելով՝ Ծիմլա կոչուած գիւղը անոնց Ծլփատութեան համար մեծ հանդէս մը կը կատարէ երեք օր, և այս երեք օրը գիւղին առջեկն վազող գետը միշտ արին կը վազէ. ամեն մարդ կը սոսկայ, և մոլլաներէն ոմանք Տէրէպէյիին ըրած գործերն ու հալածանը ապօրինաւոր և այն արեան նը. շանը անոր ապացոյց համարելով՝ երես կը դարձըննեն։ Ուստի տէրէպէյին երկրորդ օրը նորէն իր գօրրովը երբ Բերվանէ հայ գիւղը կերթար, որ բոլոր գաւառին մէջ հայութեան վերջին ապաստանարանը մնացած էր, զայն ևս տաճկացընելու իր թշնամիները որ դարանամուտ կը սպասէին, զինք կը սպաննեն և մարմինը ընկած տեղույն վրայ անթաղ կը մնալ և զազանակուր կը կորնչի և արդի Բերվանէ գիւղը կրօնափոխութենէ կազատուի. Ահա այսշափ մը հազիւ տեղեկութիւն ունիմք Տրապիզոնի շինական հայոց

դաղթականութեան վրայ։ Թէպէտ Գարատէրէէն փախչող ժողովուրդներէն ալ ետքերը շատերը տաճկացան ինչպէս լսինք, սակայն մաս մը արգէն կայ ծրապիզոնի շուրջը 1000 տան չափ գիւղարնակ, իսկ ձէնիկ փախչողները բռնութեամբ բոլորովին տաճկացուցին, որոնք ապա Արդութեանց հրզանկայիշատակ Յովսէփ Կաթողէկոսի բարձր պաշտպանութեամբ քրիստոնեայ ապրելու արտօնութիւն ստացան ու հիմա ալ քրիստոնեայ են։

ԲԱՐՔ, ԱՐՃԵՍՏ

Այս շինականք ամփոփ գիւղերու մէջ առանձին չ'են, այլ տաճկաց հետ խառն կը բնակին, անոնց գիւղերու և թաղերու մէջ ցրուած։ Ասոնց բնակութիւնը ընդհանրապէս ծովեղերքն հեռու է, լեռնաբնակ և լեռնասէր ու անտառասէր են, և անտառային գործերու խիստ վարժ. զորօրինակ փաշըքնի, բիւրէքնի, շանարճի, թէքնէճի, թէրէստէճի, վառելճի, բէօմիւրճի ևայլն։ Եթէ շալակի տակ չ'ճնշուէին ի մանկութենէ առողջ ու բարեձև կազմուածք պիտի ունենային։ Ասոնք իրենց բնակած երկրին լեռնային դրիցը պատճառաւ կամ թերես իրենք նախնի քաջաց սերունդ ըլլալով՝ Տէրէպէյիներու և ուրիշ կուրներու մէջ մեծամեծ քաջութիւններ ցցուցած են, զինասէր և խիստ չարրաշ են, զգեստով և տնական կեանրով գրեթէ երկրին այլազգիներէն չ'են տարրերիր, կենցաղավարութեան մէջ բաւական խորամանկ և ոյսակալ են, ուրիշ եղեռնագործութիւններ խիստ քիչ անգամ կըսկատահի մէջերնին։ Սակայն առեանզութիւն յաճախ, մանաւանդ այս ետքի տարիներս, և այն ազգային կառավարութեան թուլութեան և առաջնորդաց ևայլոց ոմանց դօշաբազութեան պատճառաւ։

Այս շինական ժողովրդեան մէջ ազգային հին վիպասանութեան կամ աւանդութեան նշաններ գրեթէ բնաւչէ մնացել. և հազիւ թէ հարսանեաց մէկ երկու գեղջուկ

երդերու հատակուտորներ կը գտնուին, անոնց խօսած հայերէնը խորթահնչին մասնաւոր գաւառական է առանց ուրիշ գաւառներու բարբառներէն մէկուն նմանելու. սակայն թուրքերէնը սկսեր է որ ըստ օրէ զօրանալ թէ քաղաքացւոց և թէ գիւղացւոց մէջ, և աղքային լեզուն ետ ձգուիլ: Կան գիւղեր որ հայերէնը խսպառ մոռանալու վրայ են, քանի որ անդին երկու հարիւր տարիի մօտ յառաջ մահմեղական եղողները գեռ ևս բովանդակ գաւառով մաքուր և զուտ հայերէն կը խօսին, որոնց մէջ տուն մը հայ անզամ չ'կայ, թող թէ քահանայ և առաջնորդ:

Այս շինական հայոց արհեստը, ապրուստը, նեղութեանը և այս պատճառաւ քաղաք իջնալը, հեռաւոր օտարութիւններ երթալը, թշուառ մահունքն ու որբաց անպաշտպան կոռուստը արդէն քաղաքական կեանքին մէջ յայտնուած են, նոյնպէս և զգեստուց, կերակրոց և հարսանեաց մասին ալ: Միայն թէ ոչ միայն այս շինականաց մէջ, որոնք դալան կամ սլաշլըս առնել սովորութիւն ունին 'իրնէ, այլ և քաղաքացեաց մէջ իսկ երիտասարդաց ու օրիորդաց ամուսնութեան միջոցները հարսանեաց շոայլ ծախուց նկատմամբ խիստ դժուար ըլլալով՝ ամուսնութիւններ քիչ կըլլան, որով և ազգին զարդացմանն ու ժողովրդին աճմանը և ուրիշ քարոյական մեծամեծ վնասներ կըլլան. որոն և ոչ առաջնորդ մը դիտողութիւնն ըրած է քառասուն տարիէն 'իվեր, քանի որ խոհական առաջնորդի մը նախագահութեամբ ասոնց ամենուն առաջը կրնայ առնուիլ: Վասն զի խեղճ ժողովուրդը օրինաւորութիւն ու օգուտը կը ճանշնայ ու կը սիրէ. քայց ինք օրէնք զնել և հաստատելու դեռ կարող և ձեռնհաս չէ, դեռ ամեն տեղ օրէնք իրական՝ իշխանական հաճոյքն է:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Այս շինականները սրամիտ և ուսման յարմար են

ընդհանրապէս, ինչպէս զանա գիւղի և բաղաքի դպրոցի գեղջուկ աշակերտներէն կը յալտնուի, սակայն՝ իբրէ անտի բոլոր ժողովուրդը կոյր տգիտութեան մէջ է քահանայէն և իշխանէն մինչև յետին աղքատը. դպրոց բնաւ շունէին, մննակ զանա գիւղը երկու տարիէ ՚իվեր քերականութիւն, քրիստոնէական, աղգային և սրբադան պատմութիւններ, աշխարհադրութիւն, թուաբանութիւն և քիչ երկրագործութեան վրայով տեղեկութիւններ դաս կըտրուին, որով զիւղը բողոքական ըլլալէ աղատուեցաւ, որ արդէն սկսիր էր ճարակել, երանի թէ գեղջկական դպրոցաց համար երկրագործութեան արհեստին վերաբերեալ համառօտ և ընտիր դասազիրը մը պատրաստուէր, յիրաւի թէ մեծ ընդունելութիւն պիտի զտնար և թէ մեծ օգուտ բերէր, նոյնպէս բոլոր դպրոցաց համար բարեպաշտութեամբ և աղգասիրական գործովք ու բաջութեամբ Աղգային երեկի արանց պատմութիւն մը խըմբագրուէր, տղայր տղայական հասակէն անոնց օրինակին նախանձելու և անոնց հետոցը նմանելու փափազով լեցնելու համար։ Արդարի այս գիւղերը դպրոց բանալու դժուարութիւնն ալ շատ ու ասոնք են. ժողովրդեան ցրիւ վիճակը, աղքատութիւն, ուսման անփութութիւն՝ անոր յարդն ու օգուտը չ'ճանչնալով և զլխաւորապէս քահանայից կողմնակի և երբեմն ուղղակի և յայտնի ընդդիմութիւնը, և մանաւանդ առաջնորդաց անփութութիւնը կամ թերևս վարպետութիւնը, որովէս զի ժողովուրդը կոյր հնազանդութիւնն ու նախապաշարմոնքը չ'ձգէ. և պտղիներուն, հրամաններուն, հաս ու չ'համներուն և այլոց վնաս մը չ'կայ, բայց ժողովրդեան... ինչ կըլլայ թող ըլլայ. Ժողովուրդը իր գլխուն բան մը չը կընար ընել. անոր աշըը կառավարութեան և իր առաջնորդին ձեռքն է. Աստուած խղճմտանք տայ. Ժողովուրդը դպրոց բանալու հրաման կուզէ և բաջակը կը

ինզրէ, սակայն առաջնորդը կըսին թէ դպրոցը ստակով կը բացուի, ստակ ունիք նէ նախ սլտղիները տուէք և ապա դպրոց բանալու հրաման ուղեցէք: Ի՞նչ հոգերն է թէ տգէտ ու կոյր ժողովուրդը հայերէնը կը մոռանայ օր ըստ օրէ, բողոքական կրլայ, հոռվմէական կրլայ, կամ տաճիկ կրլայ: Կը վախնան թէ դպրոցը զպտղին կը խափանէ. և այս պատճառաւ չ'էր որ այս ամառ քանի մը գիւղերու մէջ պատարագ ընելը քանի մը շաբաթ արգելուցցաւ քահանայից, նոյնպէս կնունք, պսակ ևայլն. որպէս զի պտղիքը քիչ մը շուտ ժողովուին. և անոր համար ահաւասիկ թէ գիւղ և թէ քաղաք մեր ժողովուրդն ալ առաջ կ'երթայ այս անձնարած հովուաց չնորհիւ, բայց հւր կը յ՛ուազաղիմէ և բնշպէս, չեմ գիտեր: Մ'եր վիճակի առաջնորդը անկարեկիր են այս ժողովրդեան, վասն զի գիւղացւոյն վիճակը առաջնորդարանի մէջ կը տեսնեն, երբ իրենց մածուն՝ սէր, հաւկիթ, հաւ, իւղ և ոչ խար ու ստակ բերած ատեննին և հարկաւ իրենց ներկայացողները քիչ մը որպէս թէ հարուստներէն պիտի ըլլան: Գիւղերը գրեթէ բնաւ չեն ելլար, պատճառելով ճանապահաց դժուարութիւնը, բայց ինչ դժուարութիւն քանի որ իրենք ձիով պիտի երթան և ընդ առաւելն 10 ժամ տեղ, և այն ոչ թէ մէկ օրը: Այս պատճառաւ այս գաւառաց գիւղերէն շատերը երբէք առաջնորդ մը տեսած չեն, և բուն իսկ ողիսաւոր գիւղերը, ուր եկեղեցիր կը գտնուին՝ հազիւ 10—15 տարին անգամ մը առաջնորդի երես տեսած ըլլան, ասոր համար եկեղեցւոյ ստակներ կան գիւղերը՝ հաղարաւոր զուրուշերով մէկին մէկալին վրայ, հաշիւ պահանջող չ'կայ, գիտցողը քիչ, նայող բընաւ չ'կայ: Քանի մը տարի առաջ Ճանա գիւղը՝ որ ծսվեղերքին մէկ ժամ և քաղաքին երեք ժամ է, քանի մը ընտանիք բողոքական եղան, որ դեռ ևս կան. ասոնց դրակից հայեր քանիցս թախանձեցին առաջնորդին որ

իրենց միւս գիւղացիները յորդորէ ու հաստատէ՝ որ կրօնափոխութիւնը բոլոր գիւղի մէջ չ'ճարակի, և քանիցս ալ եկեղեցուց դուռը մեծ կոփեներ եղան. սակայն անհնարին եղաւ. զանիկա իր առաջնորդարանէն շարժել. ընդհակառակը բողոքական քարողիչը շարաթը երկու անդամ երթալով՝ հաստատեց զանոնք, և քիչ ժամանակէն իր մէկ աղջիկն ալ հոն հարս տարաւ. Ահա այսչափ է մեր վիճակի առաջնորդաց իրենց հօտին ըրած այցելութիւնը և այս թշուառ ու անմիջիթար ժողովրդեան յայտնած կարեկցութիւնը. Ժողովուրդը ասոնք տեսնելով օրսստ օրէ կը զայթակղի և կը յուսահատի, մէկ կողմէն ալ իր տգէտ քահանայից չնորհիւ խոր տգիտութեան և կուրութեան մէջ կը խարխարէ, և քանի որ ժողովուրդ մը այս վիճակին մէջ կը գտնուի՛ ինչ կարելի է հոն յուսալ յառաջադիմութիւն, իրաւոնք, արդարութիւն, օրինաւորութիւն և հաւասարութիւն հակակրօնից մէջ, յայտնի է որ միշտ ստրուկ պիտի մնայ և ցնորական ու աւելորդապաշտական նախապաշտամունքներով լի:

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն Վ Ի Ճ Ա Կ.

Այս ժողովուրդը որչափ ու տգէտ ու կրօնից անտեղեակ է, այսուամենայնիւ զերմեռանդ, նախանձախնդիր և կրօնասէր է. եկեղեցիք զիւղերու կեղրոններ հաստատուած են. քանի մը ժամ հեռաւոր տեղերէ շարաթն անգամ մը եկեղեցի կերթան՝ պատարագ տեսնելու. իրենց պաշարն ալ հետերնին առնելով, պատարագը կիւրակէ օրեր և կիշտ կէսօրի մօտ ատենները կ'ըլլայ հեռաբնակ ժողովուրդը համար, որոնք կիւրակէն եկեղեցի գացած օրերը՝ միայն եկեղեցւոյ ճանապարհորդութեամբ կ'անցընեն. մանաւանդ ձմեռ ժամանակ. շատերը բոկ ու կիսամերկ վիճակի մէջ կ'երևան հոն. իրենց գեղջուկ ժողովատներ եկեղեցւոյ արձակավայրը կըլլայ. նոյնպէս տուրքերը ժողովելու համար զապտիէներն ալ հոն կ'երթան զանոնք գտնելու:

Կան գիւղեր ալ որ եկեղեցի և յատուկ քահանայ չ'ունին. ինչպէս է Փլամանայ աւանի երկու ժամ բարձրը գտնուած Սաթարի գիւղը, ուր 60 տան չափ չայք կը-բնակին, որոնք ոչ եկեղեցի, ոչ դպրոց և ոչ իսկ յատուկ քահանայ մը ունին. քահանայն չորս հինգ ժամ հեռուէն կը զիտէ. ասոր համար ժողովուրդը հայերէն բարրառը և եկեղեցական ու հարսանեկան և ազգային այլ և այլ արարողութիւններն, հանդէսներն ու սովորութիւնները մոռնալու վրայ է. որոցմէ քանի մը տարուայ մէջ երկք անձինք տաճկացած ալ են:

Գիւղերու քահանայր որոնք իննի չափ են, բոլորն ալ կարի տգէտ են 'ի կրօնականս, անուս և անփայթ յու-սումն. մինչև անգամ անսխալ տուն մը աւետարան կար-դացողը (թէն գրեթէ միշտ միննոյն աւետարանները կը կարդան զորս իբր սերտած են.) մատնանիշ ցուցնելու արժանաւոր է. բաղարը գտնուած չորս քահանայից երե-քըն ալ անոնցմէ մեծ տարբերութիւն մը չ'ունին այս մասին, որոց երկուրը Մեսրոպ Արքապիսկոպոսի եկեղե-ցասիրութեան կենդանի վկայներն ու արձանները պիտի համարուին. Գիւղերու քահանայր ամենն ալ իրար վրայ գրեթէ 100 ական տնէն աւելի ծուխ ունին. ասոնցմէ շատերը միշտ ժողովրդեան հետ ըմբոստ և խիստ վա-րուելով և զանոնք խուվելով բաւական զայթակութեանց տեղիք կուտան. բոլորն ալ գրեթէ ապրուստի համար քահ. եղած և բոլորն ալ հարստացած են՝ ժողովրդեան չնոր. հիւ. սակայն և ոչ մէկն ալ զոնէ եկեղեցւոյ դպրութեան համար երկու տղայ կը վարժեցնէ. ալ ինչ կրնայ ընել տգէտ ժողովուրդը, քանի որ իր լոյսը խաւար և աղը հոտած է: Երբեմն այնքան մաքուր խիղճ և զգայուն սիրտ կ'ունենան, որ մետաքս առնելու համար շերամ չ'սպաննել և սպանութեամբ չ'մեղանչելու համար՝ եկեղեցւոյ բեմին վրայ կըքարողեն թթենիները արմատաքի խլել և կըյա-զողին ալ. Ոմանց եկեղեցւոյ մէջ շարժմունքնին և տուած քարողնին, սրբազան բեմի վրայ պատարագի ատեն հա-գած սովորական պիղծ տրեխնին՝ այլովքն հանգերձ բո-լորն ալ խիստ հետաքրքրութեան արժանի բաներ են՝ չայաստանեայցս ս. եկեղ. մեծ վայելչութեանը նկատ-

մամբ, և յիրաւի ՚ի զարմանս կըշարժեն զմարդ։ Քահանայից հեռաւորութեան պատճառաւ երբեմն երբեմն անհաղորդ ննջեցեալներ, անկնունք և անկարգ թաղումներ ալ տեղիը կ'ունենան։ Ժողովուրդը տեսակ ցնորական հեթանոսավայել գաղափարաց և կախարդութեան ու հմայից հաւատալուն համար՝ բահանայներէն ոմանք համայիններ շինելսւ ալ տեղեալ են, որով ամէն ազգէ ալ բաւական ստակ կըքաշեն։ Եյդ՝ բաղաքական և նիւթական մասերուն պակասութեան պատճառը կառավարութեան կեղրոնսական դպրոցներ չ' բանախն ու երկրագործութեան խնամբ ու բազալերութիւն չ' տախն է ըսենք. հիմա ազգայիննին ու կրօնականին ինչ ըսենք. այս մասին ալ յայտնի է, որ բարեկիրծ և ուսեալ բահանայներու և ժողովրդասէր առաջնորդներու խիստ պէտք ունինք, որոնք պիտի կրնան մհծամեծ գործեր ու ծառայութիւններ կատարել, թէ Եզզին և թէ Ցէրութեան։

Գ.Ի.Դ.ՂԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻՔ ԵՒ ԲՆԱԿԻԶՔ.

Որքան որ այս գիւղերու եկեղեցեաց թիւը յայտնի է, այնքան անյայտ է անոնց ժողովրդեան թիւը. և ասիկա ինչպէս փորձով գիտեմ միայն այս վիճակիս համար չէ, սակայն այս գիւղերը՝ ինչպէս նաև ձանիկի վիճակն ալ Պոնտական և ձանիկի լիրանց շղթայներու դժուարուտ վայրերը բազմօրեայ ճանապարհներ ցան ու ցիր սփռուած՝ և օտարի մը անձամբ շրջել ու առանձին տնակները հաշուելը կարի դժուարին ու անհնարին ըլլալով մանաւանդ այլ և այլ նկատմամբ ժողովուրդն ալ ինք զինք ճամբորդներէ և քննիչ հետաքրիիներէ ծածկելու մեծ խնամք ու փոյթ ունենալով գրիթէ միշտ անորոշ և անսուոյգ մժութեան մը մէջ ծածկուած մնալ յաջողած է. մանաւանդ առաջնորդաց ցուցակներէ շատերու անունը խուսափած է պտղիներու օր ըստ օրէ բարձրանալուն պատճառաւ, չ' ասեմ փոխարէն բարոյապէս օգուտ մ'ալ չ'քաղեինուն պատճառաւ, շինական բահանայը և իշխանք ալ իրենց շահը հոգալով ժողովրդեան այս զործին օգնական՝ մանաւանդ թէ հեղինակ են. հիմա ազգը թող օրինաւոր հաշիւ գտնայ. ինչ կարելի է ըստ իս՝ բանի որ աշխարհագիր.

ընկելէ ժողովուրդը կը սոսկայ, և ծածկուելով կը կարծէ թէ ապագային մէջ զօրիք և ուրիշ ծանր տուրրեր տալէ պիտի աղատի: Ուստի հիմա մեր յայտնած Շնուրը միայն առաջնորդաց ծանօթ եղածները՝ որով և միշտ ~~հաջուրին~~ քառասուն նուաղ պիտի ըլլան:

Տրապիզոնի առաջնորդական սեպհական վիճակը կրնայ բաժանուի այսպէս. Տրապիզոն քաղաք. Տրապիզոնի արևելեան՝ այսինքն Գովածա գաւառի գիւղեր մինչև ցիերվանէ գիւղ Սիւրմինէի 9 ժամ երկարութեան, Տրապիզոնի արևմտեան, այսինքն՝ Աղճապատ գաւառի գիւղեր մինչև ցՄաշա գիւղ 9 ժամ, այս մասին վրայ կրնան սեպուիլնակ քաղաքի հարաւային կողմի գիւղերը, որոնք Մաշկա գաւառին մէջ են Ցէղէրմէն Ցէղէսի գետին ձախ կողմը, որոց վերջին ծայրն է Զիղաքսա գիւղը 5 ժամ քաղաքին: Փոլ աւան ծովեղերեայ յարևմուտս Տրապիզոնի 11 ժամ: Էլէու ծովեղերեայ աւան 17 ժամ Տրապիզոնի, Թրիբոլի քաղաք 22 ժամ և Քիրեսուն քաղաք 34 ժամ Տրապիզոնի: Տրապիզոնի առաջնորդութեան մաս է նաև Կիւմիւշխանա 24 ժամ հեռի, և Խաս գիւղեր անունով Բայրերդու վիճակի 6 գիւղերը: Այս ետքերս Արդն քաղաքն ալ այս վիճակին հետ միացաւ: մի և նոյն վալիութեան մէջ զըտ նուելուն. Խչալէս նաև յետոյ ձանիկն ալ իր մասերովը:

Տրապիզոնի մէջ չայք են 800 ի մօտ առանձին ընտանիք, երեք եկեղեցիք կան հին և փորբիկ ու անշուր, որոնց անուններն են Աստուածածին կամ ս. Օգսէնտ. ս. Ստեփաննոս կամ Զարլսափան և ս. Յովհաննէս. և քաղաքին հարաւային կողմը մէկ ժամ հեռու ս. Ամենափերկիշ վանր բարձր գիրքով, որոն մէջ միայն աշխարհական երկրագործ ընտանիք մը կը բնակի: տնտես անով: Ասիկա Տրապիզոնի պարծանք մը կրնայ ըլլալ՝ եթէ գործունեայ վարդապետ մը իր մէջ ունենայ, թիշ միջոցէն փորբիկ գիշերօթիկ դպրոց և տպարան մը կրնայ ունենալ: Այսօրուենէ 20,000 դահնեկան եկամուտ կրնայ բերել՝ եթէ թիշ մը խնամք ըլլուի. իսկ եթէ վստահելի և գործունեայ վարդապետ կամ աշխարհականի մը ձեռք անցնի ու երկիրները մշակել տայ ըստ օրինի՝ միջին հաշուով հինգ տարին եղբը 50 հազար դահնեկանին աւե-

ի միայն երկրագործութենէ կրնայ առնուիլու թող ուխտաւորներէ եկածը, որ արդէն հինգ հազարէն աւելի կ'ուղայ տարին: Վանքի կալուածները մշակելու մասին գրած յատակապիծս չ'կրցայ գտնալու Տրապիզոնի մէջ չորս քահանանայք կան ծխատէր ա. բահ. Տէր Մէլքօնեան, տ. Յակոբ ծերունի Մինասեան, տ. Բարդուղիմէոս Կիւմիշխանցի, և տ. Թաթէոս Աղաճանեան: Տէր Կարապետ Տակրչեան՝ անպաշտոն: Դպրոց մէկ՝ երկսեռ (այս օրուան վիճակին չնայելով) 500 ի չափ աշակերտք. որոց 100 ը միայն օրիորդը են, որ բաղարիս համար բնաւ բան մը ըսել չէ, 13 պաշտօնեայք, որոց մէկը անտես է. ուսմունք քրիստոնէական. աղգային և սրբազն պատմութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, ալճէպրա, տօմարակալութիւն, հայկաբանութիւն մինչև ցտրամաբանութիւն, գաղղիարէն և տաճկերէն՝ լեզուր: Տարեկան ծախը 40 հազար. Սպային պարտը 300 օսմ. վրայէն աւելի՝ տոկոսաւոր, եկամուտ՝ վանքէն և իր անդաստաներէն, երեք եկեղեցիներէն, աղգային 13 մաղաղա և խանութներէն 40 հազարի մօտ, դպրոցի և ուրիշ տոսմակները գուրս: Աղգային հաշիւները արդի թաղ. խորհուրդը կաշխատի կարդի զնել և ծախը ու եկամուտ մէկ տարուանը զումարել և թաղ. խորհրդոյ դիւանը արձանագրել, որպէս զի գիտցուի թէ ազգը ինչ աղքիւրներէ հրան եկամուտ և տարեկան քանի տեղ և որքան ծախը ունի, և ըստ այնմ ապագային կարգադրութիւնները այն յատակագծին վրայ տնօրինուին:

Տրապիզոնի արևելեան գիւղօրէք, գաւառը Գովաթա, Զէֆանող զիւղ 2 ժամ Տրապիզոնի, գիրք բարձր և զուարճալի՝ նոյնալէս և օդ. բաւական ամփոփ, տունք 40. եկեղեցի մէկ. նոր՝ կամարակապ և բարաշէն, ս. Թորոս, բահ. և դպրոց չ'ունի: Սոր արևելեան հարաւը Սամարուքսա գիւղ, սահմանակից իրեն, գիրք բարձր, օդ առողջ բայց խոնաւ. ցրիւ և տարածութիւն երեք ժամ. տունք 65, թաղ 8, Մտիֆանոսվի, Կրոմիլա, Մանղէլէր և Տուրիսա, Քէշիշի, Մինասի, Սկաֆիեա, Տուռնաօղի և Ճօշարա: Եկեղեցի մէկ Մկաֆիեա թաղին մէջ. սուրբ Լուսաւորիչ կէս բարաշէն, այսինքն՝ միայն խորանը կա-

մարակապ և եկեղեցւոյ ծածրը փայտաշէն, բազաքէն 4^{1/2} ժամ հեռու. Քահանայ մէկ տէր Յովհաննէս Մալիկեան։ Ճանայ գիւղ Սամարուքսայի արևելքը՝ անոր սահմանակից. դիրք չափաւոր բարձր, օդ մէկ մասը, ծովեղերրի կողմը վնասակար. ցրիւ և տարածութիւնը գրեթէ երեք ժամ. (այս տարածութիւնը գիւղին երկարութիւնը իմանալու է). տունը 75. Ժաղ 5. Կուլիլա և Կոխալի, Սարայլար, Աֆիանց, Ծենկելա և Կիւշանայ. Հէն եկեղեցիր երեք. 1 ս. Սարգիս 'ի Սարայլար՝ 3^{1/2} ժամ բաղաքին. Նորակերտ՝ կամարակապ և բարձր՝ որ առաջնորդաց անփութութեան յապացոյց բանի տարիէ 'ի վեր պատարագ կ'ըլլայ իր մէջ և օծուած շէ. բանի մը գիշեր ալ առաջնորդը եկեղեցւոյն բովի տունը ննջած է նախընթաց ամառ և իրեն ալ յայտներ ու առաջարկեր են. բայց չեմ գիտեր թէ ինչնու համար չէ օծեր. 2. ս. Գէորգ 'ի Ծենկելա՝ բարձէն և հին մէկ ժամ հեռու միւսէն. 3. ս. Սարգիս 'ի Կիւշանայ կիսականգուն կամ կիսաւերակ. մէկ ժամ հեռու միւսէն և 5 ժամ բաղաքէն. Քահ. մէկ տ. Սարգիս Կոկոսեանց. դպրոց մէկ 'ի Սարայլար, աշակերտը և աշակերտուհի 45-ի չափ. Կալաֆկա Հանայի հարաւային կողմը և անոր սահմանակից. դիրք բարձր լերանց կողե. րու վրայ. օդ աղնիւ, քիչ խոնաւ, ցրիւ՝ տարածութիւն 6 ժամ երկար. տունը 100. Ժաղը 13 Տոննա գետի երկու կողմերը՝ վարէն վեր նկածով. Տոննա, Քեան, Կալաֆկա. Արտըճ Մէսէխորի. Սամերա. Կատարուքսա. Ապիեօն Ֆիրենծուտ. Խամու. 2էվինելի. Պաճուլակ. Միքտէր և Սուկուրի. Եկեղեցիր երկու ս. Գէորգ 'ի Մէսէխոռ. կէս բարաշէն, և ս. Լուսաւորիշ յԱպիեօն՝ նորակերտ և կէս բարաշէն. (Այս եկեղեցին և իր ժողովուրդը Ուզ մեծ գիւղին կրվերաբերին), Քահանայը շ. տ. Կարապետ Ղուկասեան 'ի Մէսէխոռ. և Տէր Յովակիմ Սուկուրեան այրի՝ յՈւղ. Դպրոց նոր այս ամսոյս մէջ բացուեցաւ 'ի Կալաֆկա, աշակերտք 45 արդէն. բայց մեծ յոյս կայ աւելանալու. Կալաֆկայի արևելեան հարաւն է Միւրմէնէ գաւառը. ուր կըդտնուի Բէրվանէ հայաբնակ գիւղը 35 տուն հայերով, ծովեղերեայ Սիւրմէնէ աւանէն 6 ժամ դէպի լեռը անտառներու մէջ. օդը ազնիւ՝ բայց քիչ խոնաւ.

տարածութիւնը $2\frac{1}{2}$ ժամ. թաղ 3. Մախթելա. Կալա-
մանոս և թէրվանէ. հկեղեցի մէկ. կէս քարաշէն, ս. Լու-
սաւորիչ անունով՝ 'ի թաղն Կալամանոս. բահանայ մէկ
այրի՝ տ. Մատթէոս Մինասեան, եղբայր տ. Յակոբայ,
որ քաղաքը կը բնակի. դպրոց չկայ:

Տրապիզոնի արևմտեան գիւղօրէք, գաւառ Աղճա-
պատ և Մաշկա. Անիֆա և Վերանայ Մաշկայի մէջ, Մա-
լա և Սախտարիեա՝ Աղճապատի մէջ:

Անիֆա դիւլ էղէրմէն տէրէսի գետին վրայ՝ անոր
ձախ կողմը. Տրապիզոնի 2 ժամ. դիրք՝ բաւական բարձր.
անտառը քիշ. օդը ազնիւ. տները ցրիւ, տարածութիւնը
երկու ժամ ու կէս. տունը 87 թաղ 5. Ծրղալիա. ծեփ.
ընկա. Անիֆա. Դօց. Թօփաշլի և Ցէլի պալթա. եկեղե-
ցի 2. ս. Լուսաւորիչ նորակերտ կէս քարաշէն 'ի Դօց.
և... յԱրդալիա. Քահանայ մէկ տ. Մաղաքիա Քահրիմա.
նեան. դպրոց չ'կայ. Վերանա զիւլ սահմանակից Անի-
ֆայի՛ երկու ժամ անոր հարաւային կողմը, միենոյն գե-
տին վրայ. դիրք բարձր և լերանց մէջ. օդը ազնիւ. տա-
րածութիւն $2\frac{1}{2}$ ժամ, տուն 84. թաղ 4. Կրոպի, Վերանայ.
նոլսածինա և Զիշակսա. եկեղեցի 2. ս. Լուսաւորիչ
նորաշէն կէս քարակերտ՝ 'ի Կրոպի, և ս Սարգիս նոյնպէս
խորանը կամարակապ՝ 'ի Վերանայ. բահ. մէկ. տ. Մա-
տթիա Տէրտէրեան. դպրոց չկայ. Մալա գիւլ Վերա-
նայի արևմտեան կողմը 3 ժամ անկէ հեռու, Սերայի
գետին վրայ՝ ասոր երկու կողմերը. դիրք բարձր՝ լեռ-
նային. անտառուտ և օդը առողջ՝ բայց մառախլապատ
և խոնաւ. Տարածութիւն կամ երկարութիւն 3 ժամ.
տունը 141. թաղը 9. Ճորին վարի կողմէն սկսելով Զա-
ւուրտիւ, Կապան, Կապարան, Կատոլ, Թարաքճելի, Կիւ-
նէյ, Աղրօյ Մալա և Միմերա, որ 9 ժամ է բաղաքէն.
ունին եկեղեցի 2. ս. Յարութիւն՝ միջակ մեծութեամբ և
միայն խորանը կամարակապ՝ 'ի թաղն Աղրօյ. և ս. Թո-
րոս՝ նորաշէն կէս քարակերտ՝ 'ի գիւղն Կապան. Քահ.
2. տ. Յովհաննէս Քէշշեան և տ. Մկրտիչ Գալստեան.
դպրոց չ'կայ. Մաթարիա զիւլ Մաշայի հիւսիսային կողմը
4 ժամու չափ անկէ հեռու և երկու ժամ Փլաթանայի,
դիրք բարձր լերան մը երկու երեսին վրայ, արևելեան

երեսը Կալանիմայի ձորոյն վրայ կընայի. տունք ցրիւ 45. տարածութիւն 2 ժամէն աւելի. թաղ 4. էֆթերիլի. Ախանտա. Կիւնէյ և Կուղ մահալէ. ոչ եկեղեցի, ոչ բա-հանայ և ոչ դպրոց կայ. Մաշայի բահանայք զանոնք կը հովուեն.

Փոլ 10 տուն չայք. եկեղեցի բան չկայ: Էլէուփ մէջ չայք 27 տուն. քահանայ և դպրոց չկայ. եկեղեցի պարզ նորակերտ կամարակապ ս. Լուսաւորիչ անունով. առ ալ բանի մը տարի է շնուրիլը, բայց գեռ օծուած չէ. հոս ալ նպիսկոպոսը կարծեմ ալեկոծութեամբ ընկեր և դիշեր մը մնացեր է. և ժողովուրդն ալ աղերսարկու եղեր ու չէ ընդունուեր, Թերիբօլի՛ տունք չայոց 40. եկեղեցի մէկ ս. Սստուածածին՝ կամարաշէն բահ. մէկ տ. Սիմէն Տէր-տէրեան. դպրոց մէկ՝ չափաւոր բարեկարգ, չայկաբանու-թիւն, գաղղիարէն և տաճկերէն լիեզուք. Քերիսին բաղար տունք չայոց 88. Եկեղեցի 2. ս. Սարգիս, հին և բա-րափոր, ս. Լուսաւորիչ՝ նոր և հոյակապ. բահանայը եր-կու. ընիկ՝ Տէր Յավհաննէս. նորեկ Թամզարացի Տէր Դրի-գոր Պետանց. դպրոց 1. ուսմունք հայկաբանութիւն, գաղ-ղիարէն և տաճկերէն լիեզուք. Փոլի և Էլէասի չայք Թամ-զարայէն մօտ տարիներս զաղթած և ամենքն ալ վաճա-ռական են:

ԱՐԴԻՒՆ ԿԱՄ ԱՐԴՈՒՆ ԵՒ ԿԻՒՄԻՇԽԱՆԱՔ.

Տրափիզոնի առաջնորդութեան հեռաւոր մասերը կը համարուին Արդուին և Կիմիշխանէ. Արդուին Խուրէէն 14 ժամ դէպ 'ի ցամաքի ներսն է. Պաթումէն ալ Ճորոխ գետով կ'երթացուի Յ օրէն, և ձմեռը մենակ այս ճամբան կը-բանի, որով Արդուին երկու (իսկէլէ) կունենայ: Արդուինի մէջ 150 տան չափ չայք կը ընակին. Հոռվմէականը մե-նակ քաղաքին մէջ հայոց չափ չորս կան՝ թող գիւղերը. գեղերը բնաւ չայ չկայ. և այն 150 տունն ալ ոչ այցե-լու գացած է, ոչ օրինաւոր բահանայը ունին և ոչ դըպ-րոց. խիստ խեղճ և առանձին լիճակի մէջ ըլլալով՝ կը-կասկածուի թէ քիչ ժամանակէն պապականութիւնը զա-նոնք ալ կ'ըլլէ. և Տայոց այս մասէն ալ չայութեան հետ-քը բոլորովին ջնջուի. ունին հիմա 1 եկեղեցի ս. Սստուա-

ծածին անունով, բաւական հին մեծ և հոյակապ, քահանայ 2. տ. Խզնատիոս և տ. Մելիտոս՝ նորեկ։ Դպրոց մէկ. մանկունք 70. ուսմունք հասարակ ընթերցանութիւն. ժողովրդեան վիճակը միջակ. առևտուրը յաջողակ։

Կիւմիշխանէ Տրապիզոնի հարաւային կողմը կիյնայ. ամրան ճանապարհով 18 և ձմրան՝ 24. բնակիչ չայր 250 տուն. շրջակայները բնաւ հայ չ'կայ. Քաղաքին մէջ ունին մէկ եկեղեցի ս. Սստուածածին անունով, հոյակապ և հին. քահանայ շորա՝ տ. Մատաթիա Թօքմանեան, տ. Սնդրէաս Տէր Սնդրէասեան, ա. Մեսրոպ Ջէհէմեան և տ. Մատթէոս Սիմիկեան։ Դպրոց մէկ. ուսմունք միայն հայերէն։

Կիւմիշխանէի հարաւային կողմը անկէ մէկ օր հեռու և Բայրերի շուրջը Բայրերդի և Սպերու դաշտերուն մէջ ցիր ու ցան 6 գիւղեր կան (խաս քեօյլէր) կոչուած, ուրոնք հին ժամանակներէ 'ի վեր Կիւմիշխանէի գայմաղա. մութեան և Պոնտոսի առաջնորդութեան մասը համարուած են. սակայն երկուրին նկատմամբ ալ խիստ ասկօրինաւոր և վնասակար է այս բաժանումը. և կրնայ զեղծմանց առիթ և ժողովրդեան ալ վնասակար ըլլալ. և բուն իսկ հոգեսոր ու բաղաքական կառավարութեանց ալ շատ պարագայներու մէջ դժուարութիւն և ծանրութիւն համարուիլ. մէկ խօսրով այս գիւղերը ամենայն մասամբ միմիայն Բայրերդի կը վայելեն, ուրկէ ամեն բան շուտով կրնայ կարգադրուիլ. Սյս գիւղերը մէկզմէկէ բաւական հեռու են. մէկ ծայրէն միւսը 12 ժամ. Սսոնց անուններն են իրենց բնակչաց թուովը. Նախ Բայրերդի արեմեան զաշտէն սկսելով՝ Քունթա գիւղ 6 ժամ Բայրերդի. բոլորը հայ 70, եկեղեցի մէկ ս. Սստուածածին կէս քարաշէն. քահանայ 2. տ. Ղուկաս Մալտիկեան և տէր Մարգիս Մարտիկեան. դպրոց չկայ. Պալախոռ գիւղ՝ Բայրերդի 4 ժամ, հիւսիսային կողմէ. մինակ չայր 56 տուն. եկեղեցի. 2. երկուքն ալ փայտաշէն ս. Գէորգ և ?. քահանայ մէկ տ. Ցակոր Խաչիկեան. Սյս երկու գիւղերն ալ կրնայ մէկ մէկ դպրոց բացուիլ՝ որ արդէն չ'կայ. իսկ միւսերը քիշուոր և աղքատ են. նիւ՝ Բայրերդու արևելեան հարաւային կողմը 3 ժամ. Մպերու դաշտին մէջ. միայն չայր

18 տուն. եկեղեցի ո. Նիկողայոս նոր և կէս քարաշէն. քահանայ տ. Տաճատ Գալֆայիան. դպրոց չկայ. Բնջերկայ. մերձ նիւթի. միայն չայը 12 տուն. քահ. և դպրոց չկայ, ոչ աչ օրինաւոր եկեղեցի. Հնձաւերակ' միայն չայք 8 տուն. եկեղ. և քահ. չկայ. Ճախմանց գիւղ' միայն հայք 20 տուն. մէկ հին եկեղեցի կէս քարաշէն... և մէկ քահ. տ. Գրիգոր. Այս վերջինները բոլորն այ Սպերու դաշտի գիւղերն են՝ Բայրերդի առաջնորդական վիճակի գիւղերուն մէջ խառն.

Ճ Ա Ն Ի Կ.

Ճանիկի վիճակը կը բաժնուի Օրդու, Խնիէ և Զարշամպա. հաւանական կ'երեի ինձ թէ այս վիճակը 4000 ընտանիք և թերես աւելի չայ պարունակէ, սակայն երկրին գիւղքը Տրավիղոնի շրջակայններու նման լիոնային և զիւղերն ալ նոյնպէս տաճկախառն և ցրիւ ըլլալուն օտար մէկը անհնարին է որ անոնց հիւղերը շրջի մի բատ միոցէ և անոնց ճիշտ թիւր գիտնայ. այլ ինչ որ գիւղացին կ'ըսէ՝ անոր հաւատալու է. Առաջնորդք այս գիւղերուն հաշիւը երբէք չ'են կրցած անել. վասնզի գեղջուկ քահանայք մաս մը կըծածկեն ժողովրդէն, որ անոնց առաջնորդական հասոյթը իրենք ուտեն. Առաջնորդները իրենք ամձամբ այն լիսները շ'շրջագայելով՝ ուրիշ մէկը քահ. կամ վարպապետ՝ վոխանորդ կըրոկեն անոնց արդինքը ժողվել և իրենց հասցընելու. ասոնք ալ ժողովը զէն մեծագոյն մաս մը դարձեալ կըծածկեն առաջնորդներու աշըն. և եղածն ալ բոլորովին կ'աղրատցընեն և առաջնորդաց աշքէն կը ձգեն, որպէս զի իրենց աւելի կերակուր ելլայ և երկրորդական որս մ'ալ պատրաստուի. ահա այսպէս է որ մեր վիճակները զրեթէ միշտ անյայտ մթութեան մը մէջ մնացած են մինչև ցարդ:

Օ Ր Տ Ո Ւ.

Օրտու քաղաքին մէջ 200 տան չափ չայք կան. ունին մէկ եկեղեցի նորաշէն հոյակապ և փառաւոր. 2 քահ. տ. Եղիա և տ. Յովհաննէս այրի. դպրոց մէկ. չափաւոր քարեկարդ. ունի զաղղիերէնի և տաճկերէնի սկզբունք

ալ. աշակերտը 150 ի մօտ. Օրտուի գիւղերը 800 տնէն աւելի չայր կը բնակին. սակայն զիսղերուն, եկեղեցիներուն և քահանայից անտունները և ժողովրդեան ողքանութիւնը ճիշտ իմացած չիմ տակաւին.

Ի Ի Ն Ի Է

Իւնիէ քաղաքի մէջ միայն 80 տուն չայր կան, այս ծովեղերեայ քաղաքաբնակ հայեր ընդհանրապէս վաճառականութեամբ կը զբաղին և Տրավիղոնի հայերէն շատ աւելի հարուստներ կը գտնուին ամէն մէկ քաղաքաց մէջ. Իւնիացիր ունին մէկ եկեղեցի ո. Մինաս, միջակ մեծութեամբ զետնափոր և կամարակապ, մէկ ք. Տէր Մարտիրոս: Դպրոց մէկ չափաւոր բարեկարգ, սկզբունք լեզուագիտութեան: Դիւլօրէք իւնիայի Պալլըխ գիւղ 60 տուն չայր, մէկ եկեղեցի. (Ճանիկի վիճակի մէջ քարաշէն ե. եկեղեցի զրեթէ բնաւ չ'կայ, պատերն անգամ բոլոր բռվանդակ փայտէ է.) մէկ քահ. Տէր Ստեփաննոս 2ըսլրիլի գիւղ 20 տուն. մէկ եկեղեցի. քահ. մէկ նորընծայ տ. Յովհաննէս: Ֆենիսիս գիւղ 80 տուն, մէկ եկեղեցի, մէկ քահ. տ. Եղիա: Քեօրիւք գիւղ 30 տուն, մէկ եկեղեցի մէկ քահանայ նորընծայ տ. Գաբրիէլ: Էեօլիւմ տաղը գիւղ 90 տուն, մէկ եկեղեցի ո. Գէորգ. ա. քահ. տ. Գրիգոր Սճէմեան. որդին տ. Պօղոս և տ. Ստեփան. Իւշ Բիւղար գիւղ 80 տուն, մէկ եկեղեցի 2 քահանայ, մէկը տ. Պետրոս Թույլեանց, միւս ևս. Էեօրիւղ քիոյու 60 տուն, մէկ եկեղեցի. քահ. տ. Խորէն: Փացցայի գաւառին մէջ 2ամաշ գիւղ 60 տուն, մէկ եկեղեցի, 2 քահ. տ. Յովհաննէս և տ. Պօղոս խսպառ արգելեալ: Թերմէ գաւառի մէջ Գոճաման գիւղ 80 տուն չայր, մէկ եկեղեցի, 3 քահանայ. Տէր Յակոբ ծերունի. որդին նորընծայ տէր Կարապետ և տէր Գրիգոր այրի:

2 Ա Ր Ը Ա Մ Պ Ա

2արշամպա քաղաքի մէջ տունք չայրց 200. Եկեղեցի մէկ նորակերտ մեծաղիր և փառաւոր. քահանայր 2 տ. Պետրոս' և տ. Թաթէսոս այրի. դպրոց մէկ միջակ, աշակերտք 150-ի մօտ. Գիւղօրէք 2արշամպայի:

Աղճա կիւնէյ տունք 110, 2 եկեղեցի, 3 բահանայ տէր Սարգիս՝ Թէմէշ մականուանեալ. տ. (թէմէնչէճի) անունը շ'կրցայ ստուգել, և տ. Յակոր. Ուկու Բունար զիւլ 110 տունք, եկեղեցի մէկ, բահանայ 3. տ. Թագէսո, տ. Յովհաննէս և տէր... Եյրի տէրէ գիւլ 70 տուն. եկեղեցի մէկ փայ-տաշէն բայց խիստ փառաւոր. բահ. 3. տ. Յովհաննէս, տ. Յակոր և տ. Սարգիս. Ղուրշումի գիւլ տունք 250, եկեղեցի 2. մէկը խիստ փառաւոր, բահանայր 6, ծերունի տ. Յարութիւն, տ. Նիկողայոս, տ. Ալէքսան՝ այրի, տ. Յովհաննէս, տ. Դաւիթ և տէր... Այվաճըլս գիւլ 100 տունք, եկեղեցի երկու, բահանայր 3, տ. Մարկոս, տ. Պօղոս և տ. Յարութիւն. Եյնէշ և Թաշօվա գիւլը 80 տ. եկեղեցի մէկ, բահ. 3, տ. Յովհաննէս, տ. Գէորք, որդին դարձեալ տ. Գէորգ. Զաթալս գիւլ տունք 80, եկեղեցի մէկ, բահ. 2, տ. Առաքել, որդին տ. Յարութիւն. Այս գիւլերու մէջ ինչպէս ըսինք շատ մը ծածկուած տներ կան, և 80 անուոր գիւլը մինչև 130—140 տուն ըլլա-լու է. սակայն դպրոց մը չ'կայ ատոնց մէջ. և այս ժո-ղովուրդը Տրապիզոնի շինական ժողովրդէն ապահով կեանք ու ապրուստ ունէր բանի մը տարի յառաջ. սա-կայն հիմա քիչ մը ընկած է առաջուան վիճակէն, այսու ամենայնիւ եթէ իմամբ տրուի՛ շատ մը դպրոցներ կրնայ բա-ցուիլ և ժողովուրդը երգանկութեան առաջնորդիլ. բանի որ ընդարձակ երկիր ունին և միանդամայն բարեբեր և բաւական ալ վաճառականութիւն կայ դաւառին մէջ. մե-տաքս ալ արդէն քիչ մը սկսեր են արտադրել և օր ըստ օրէ շատցնելու վրայ են իրենց թթենիները¹⁾.

5

1) Այս տեղագերը, որ մեռք ձեռք բերինք 1896 թուին Տրապիզոնում, պատրաստել է Պ. Թումայեանցը Խրի-մեան Հայրիկի պատուերով (այժմ Վեհ. Կաթ. ամ. Հայոց):